



ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Քոչարեանը Պէտք է Փառք Տայ որ Կ'ապրի Նոր Հայաստանի մէջ

Այս շաբաթ Հայաստանը ցնցուեցաւ, երբ ի յայտ եկաւ որ, գաղտնալսուած է ու արձանագրուած՝ երկրի ամենէն կարեւոր օղակները նկատուող Ազգային Անվտանգութեան Ծառայութեան եւ Յատուկ Քննչական Ծառայութեան պետերուն միջեւ տեղի ունեցած հեռաձայնային խօսակցութիւնը՝ Մարտի 1-ին առնչուող դատական գործերուն վերաբերեալ: Չայնագրութեան համացանցի վրայ յայտնուիլը եկաւ զգուշացնելու, որ նախկին իշխանութեան շրջապատը տակաւին ներկայ են այդ մարմիններէն ներս եւ ունին միջոցներն ու սարքաւորումները, նման գործողութիւններ իրականացնելու, նոյնիսկ երկրի թիւ մէկ գաղտնի սպասարկութենէն ներս:

Այս ուղղութեամբ յատկանշական էր Ռոբերթ Քոչարեանի գրասենեակի հրապարակած երկար յայտարարութիւնը, ուր Փաշինեանն ու իր իշխանութիւնը կը մեղադրուին Մարտի 1-ի գործով քաղաքական հետապնդումներ իրականացնելու մէջ: Նոյնպէս կոչ կայ հասարակութեան՝ «թոյլ չտալ, որպէսզի Հայաստանը ժողովրդավարական երկրից վերածուի ամբոխավարական ձախողուած պետութեան»:

«Ժողովրդավարական երկրի» մասին այս խօսքերը կը պատկանին մարդու մը, որու իշխանութեան տարիներուն տեղի ունեցան 39 քաղաքական սպանութիւններ, երկու մեծ ոճրագործութիւններ՝ Գոկտեմբեր 27 եւ Մարտի 1, ընդդիմադիր գործիչներ յայտնուեցան բանտերու մէջ, փակուեցան անկախ հեռատեսիլի ալիքները եւ միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւններուն կողմէ Հայաստանը դատուեցաւ ոչ ազատ երկիրներու շարքին:

Քոչարեան կը խորհի թէ ժողովուրդի յիշողութիւնը այդքան կարճ է եւ յանդգնութիւնը ունի՝ նման կոչը ուղղուելու: Այդ ժողովուրդը մի քանի ամիս առաջ տապալեց իրենց բռնատիրական վարչակարգը եւ կը պահանջէ նոր իշխանութիւններէն՝ դիմել աւելի կտրուկ քայլերու, ամբողջութեամբ թեւաթափ ընելու համար գրեթէ անկասկածաբար մնացորդացը, քանի որ յեղափոխութեան ձախողումը սոսկ Փաշինեանի ձախողումը չէ, այլ՝ ամբողջ Հայ ազգի:

Փոխանակ՝ նման ծիծաղելի կոչեր հրապարակելու, Քոչարեան ու իր նմանները թող փառք տան, որ կ'ապրին նոր Հայաստանի մէջ, այլապէս առաջին օրէն յայտնուած պիտի ըլլային բանտերու մէջ եւ իրենց ձեռքէն խլուած պիտի ըլլար ապօրէն կերպով դիզած հարստութիւնը, որ այժմ կ'օգտագործեն խարխուլու համար պետութեան հիմքերը:

«ՄԱՍԻՍ»

Գաղտնալսուած է ԱԱԾ-ի եւ ՅՔԾ-ի Ղեկավարներու Հեռաձայնային խօսակցութիւնը

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) տնօրէն Արթուր Վանեցեան հաստատեց, որ համացանցի մէջ տարածուած ձայնագրութեան մէջ կը գրուեցին ինքն ու Յատուկ Քննչական Ծառայութեան (ՅՔԾ) պետ Սասուն Խաչատրեանը:

«Խօսակցութիւնն իրականում մեր մասնակցութեամբ է, եւ շատ տարօրինակ է, որ գաղտնալսուել է ԱԱԾ տնօրէնի եւ ՅՔԾ պետի խօսակցութիւնը: Դա մտահոգիչ փաստ է, որի հետ կապուած կը լինի մանրակրկիտ քննութիւն եւ կը պարզուի ձայնագրութեան աղբիւրը եւ թէ ով է ձայնագրել: Եթէ չեմ սխալուում դատախազութիւնում արդէն յարուցուած է քրէական գործ», - ըսած է Վանեցեան:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէնը նշած է՝ խօսակցութիւնը եղած է ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի խափանման միջոցի վերաբերեալ առաջին ատենի դատարանի յայտնի վճիռը կապեցնելու օրը:

«Ուզում եմ ասել, որ հաշուի առնելով այն հանգամանքը, որ դատարանի առջեւ կանգնած էին Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանն ու Հաւաքական Անվտանգութեան Պաշտպանութիւնը (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղար Եւրի Խաչատուրովը, պէտք էր 100



Արթուր Վանեցեան եւ Սասուն Խաչատրեան միատեղ մամուլի սուլիսի ընթացքին

տոկոս համոզուած լինել, որ այդ գործում որեւէ թերացում եւ թերութիւն չկայ: Նման քննարկում իմ եւ պարոն Խաչատրեանի միջեւ կայացել է, եւ եղել է գուտ իրաւաբանական քննարկում», - ըսած է Վանեցեանը՝ շարունակելով. - «Այն պայքարը, որ մենք սկսել ենք, դա շարունակելու ենք, եւ մեզ չի խանգարելու ոչ մի բան, որեւէ խոչընդոտ չի կարող խանգարել սկսած գործում»:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) տնօրէնը նշած, որ երկու կառույց կայ, Յա-

տուկ քննչական ծառայութիւն (ՅՔԾ) եւ Ազգային Անվտանգութեան

Շար.ը էջ 5

Արմէն Բայբուրդեան Նշանակուած է Լոս Անճելըսի Մէջ ՀՀ Գլխաւոր Հիւպատոս



Լոս Անճելըսի մէջ ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Բայբուրդեան

ՀՀ Արտաքին Գործոց նախարարութեան 6 Սեպտեմբեր 2018-ի հրամանով Արմէն Վահանի Բայբուրդեանը նշանակուած է Լոս Անճելըսի մէջ ՀՀ գլխաւոր հիւպատոս:

Արմէն Բայբուրդեանը աւելի քան 10 տարուայ ընդմիջումէն ետք դարձեալ կը վերադառնայ ԱԳՆ համակարգ: Ան այն դիւանագետներէն էր, որոնք հեռացուած էին դիւանագիտական աշխատանքէ 2008 թուականի ամռանը՝ ընդդիմադիր նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսեանին սատարելու մասին հրապարակային յայտարարութիւնով հանդէս գալէ ետք: Այդ պահին Արմէն Բայբուրդեանը կը զբաղեցներ Հայաստանի արտաքին գործերու փոխնախարարի պաշտօնը, որը ստանձնած էր 2004 թուականին:

2008-2013 թթ. Արմէն Բայբուրդեանը Հայաստանի մէջ ՄԱԿ-ի մշտական համակարգողի աւագ խորհրդականն էր:

Հայաստանի եւ Ռուսաստանի Միջեւ Յարաբերութիւնները Կայուն կը Ձարգանան



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին Մոսկուայի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Սեպտեմբեր 8-ին, Քրեմլինի մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ կայացած հանդիպումէն ետք, Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին ըսած է որ, այսօրուայ դրութեամբ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ յարաբերութիւնները կայուն կը գործանան բոլոր ուղղութիւններով: Այդ կը վերաբերի քաղաքական յարաբերութիւններու ոլորտին,

ուզմական ոլորտին, Անվտանգութեան հարցերուն եւ տնտեսական համագործակցութեան: Փաշինեան իր կարգին ըսած է. - «Մենք, ի հարկէ, ունենք փայլուն յարաբերութիւններ, բայց, կարծում եմ, պէտք է զրա վրայ կանգ առնել յատկապէս մեծ ներուժ ունենք քաղաքական, տնտեսական, ռազ-

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ո՞վ է Գաղտնալսել ԱԱԾ ու ՀԲԾ Պետերին. Աննախադեպ Սկանդալ, որը Հարուածում է Երկրի Անվտանգութեանը

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

«Ֆեյբուքում» հրապարակուել է ԱԱԾ տնօրէն Արթուր Վանեցեանի եւ ՀԲԾ պետ Սասուն Խաչատրեանի հեռախօսագրոյցի գաղտնալսումը:

Տարածուած ձայնագրութիւնն իրական է, այսինքն՝ նման հեռախօսագրոյց կամ հեռախօսագրոյցներ եղել են, ինչն արդէն հաստատուել է վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ սկանդալային պատմութեան հիմնական ֆիզուրանտների մակարդակով:

Ըստ ձայնագրութեան՝ խօսակցութիւնը ՀՀ նախկին պաշտօնեաների, Մարտի 1-ի գործի, Ռոբերտ Քոչարեանին կալանաւորելու, ՀԱՊԿ քարտուղար Եուրի Խաչատուրովին կալանաւորելու վտանգների, փաստաբան Վահէ Գրիգորեանի կողմից սպասուող գրառման, պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանի եւ այլոց մասին է:

Ձայնագրութիւնում Սասուն Խաչատրեանը Վանեցեանին պատմում է, թէ ինչպէս է արձագանքել Ռոբերտ Քոչարեանը, երբ տեսել է Միքայէլ Յարութիւնեանի հրամանը:

«Ինձ դատաւորը զանգեց, ով որ պիտի կալանքը տայ, մի քիչ վախեցած է, ասացի՝ նայի ողջ գործը, նայի, դու խոսի: Ասաց՝ պարտն Վանեցեան, մի հատ հիմքերը նայեմ, ասի՝ նայի հիմքերը, կը զանգես, կալանքը, ուզես-չուզես, պիտի տաս: Վորքեմ, էդ կը փակի», - ասում է Վանեցեանը: Ըստ ձայնագրութեան՝ Սասուն Խաչատրեանը նաեւ յայտնում է, որ Եուրի Խաչատուրովին էլ են կանչում, «որպէսզի փակեն»:

«Խաչատուրովի հետ գործ չունենք, խայտառակ կը լինենք, չփակէք, սպասէք, պրծնի», - ասում է Վանեցեանը:

Հրապարակուած ձայնագրութեան համաձայն՝ Սասուն Խաչատրեանը, ըստ այս հրապարակութեան, եւս մէկ անգամ յորդորում է Եուրի Խաչատուրովի հարցին ուշադիր լինել. «Ախպէր, խնդրում եմ, Խաչատուրովինը ուշադիր նայէք, չնայած վարչապետն ասում է՝ փակէք, բայց ուռնները»: «Ինքը իրաւունք չունէր պաշտպանութեան նախարարի հրամանի հիման վրայ գործն օգտագործել: Այդ ժամանակ մենակ նախագահն ունէր նման հրաման ստորագրել», - ասում է Սասուն Խաչատրեանը:

Համացանցում հրապարակուած ձայնագրութեանն անմիջապէս արձագանքել է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ հանդէս գալով ֆեյբուքեան տեսուղերձով:

«Քանի որ այս ողջ պատմութեան մանրամասներին տիրապետում եմ, այսինքն՝ այդ յայտնի օրերին, դրանից առաջ ու յետոյ ինչ է տեղի ունեցել Հայաստանում, եւ հիմա ինչ է տեղի ունենում Հայաստանում, ես այդ կոնտեքստին, բնականաբար, տեղեակ եմ: Բայց այս պահին, ձեր թոյլտուութեամբ, մանրամասներին դեռ եւս չեմ անդրադառնալ:

Այդ պարզաբանումներին մենք դեռ կ'անդրադառնանք, թէ ինչ ասաց ԱԱԾ տնօրէնը, ինչ ասած ՀԲԾ պետը, ինչ է դա նշանակում, ինչն ինչպէս պէտք է մեկնաբանել, ինչն ինչու է հնչում, եւ ոնցը ոնց եղաւ, որ այդպէս է հնչում, այլ ոչ թէ այլ կերպ: Բայց ես ուզում եմ ուրիշ բան ասել. եկէք հիմա հասկանանք, թէ ինչ է տեղի ունենում: Ըստ էութեան, տեղի է ունեցել հետեւեալը, սա, իմ գնահատմամբ, չնայած իրաւաբաններն աւելի ճիշտ կ'ասեն, իմ գնահատմամբ՝ տեղի է ունեցել ՀԲԾ պետի կամ ԱԱԾ

տնօրէնի գաղտնալսում: Ո՞վ է արել այդ գաղտնալսումը, ինչի համար, ինչ նպատակով: Արդեօք օրէնքով նա իրաւունք ունեցել է այդպիսի գաղտնալսում իրականացրել: Եւ երբ է տեղի ունենում այդ գաղտնալսումը, ինչն է այս ամէնի քաղաքական նպատակը. ես դեռ եւս Օգոստոսի 17-ին, Հանրապետութեան հրապարակում տեղի ունեցած հանրահաւաքում յայտարարել եմ, որ, ընդհանուր առմամբ, իմ կարծիքով՝ Մարտի 1-ը բացայայտուած է եւ տարբերակ չկայ, բոլոր մարդասպանները պէտք է կանգնեն դատարանի առջեւ»:

Նիկոլ Փաշինեանը բաց տեքստով ակնարկեց, որ գաղտնալսումների հետեւում կանգնած են Ռոբերտ Քոչարեանը, Սերժ Սարգսեանը, միւսները, որոնք համոզուած են, որ եկել է հատուցման պահ: Շատ հնարաւոր վարկած է, մանաւանդ՝ Հայաստանում գաղտնալսումներ կարող են անել ոչ միայն ԱԱԾ-ն, ոստիկանութիւնը, այլ նաեւ քրեաօլիգարխիկ համակարգի մի քանի շերտեր, որոնք անցած տարիների ընթացքում կարողացել են տիրապետել համապատասխան ռեսուրսների:

Առաջին սկզբունքային հարցն այն է, թէ երկրում ո՞վ կարող էր գաղտնալսել ԱԱԾ պետին: Արդեօք մենք գործ ունենք պետական համակարգում տիրող բացարձակ ամենաթողութեան հետ, երբ երկրի առաջին դէմքը, պատկան մարմինների ղեկավարները չեն տիրապետում իրավիճակին ու գործ ունենք բացայայտ սաբոտաժի հետ: Թե՛ գործ ունենք արտաքին կոշտ միջամտութեան հետ, այսինքն՝ մեր երկրի առաջին դէմքերին օտար երկրների յատուկ ծառայութիւններ կարող են անարգել ձայնագրել, յետոյ այդ ձայնագրութիւնները հրապարակայնացնել կամ, որպէս շանտաժ, օգտագործել Հա-

յաստանի կառավարութեան կամ նրա ներկայացուցիչների հետ: Ինչպէ՞ս կարող են Հայաստանի շարքային քաղաքացիներն անհոգ լինել իրենց անվտանգութեան համար, եթէ երկրի անվտանգութեան հիմնական պատասխանատուներից մէկը՝ ԱԱԾ պետը, ինքն է անպաշտպան՝ գոնէ այն առումով, որ անձեռնմխելի չէ նրա հեռախօսային գրոյցների գաղտնալսութիւնը:

Քրէաօլիգարխիան է սպառնու՞մ մեր երկրի անվտանգութեանը, արտաքին ուժերը, այն հանգամանքը, որ ԱԱԾ-ն իր բուն գործառոյթների փոխարէն յաճախ զբաղուած է «մասկի շոուներով», թե՛ բոլոր գործօնները միասին վերցրած: Յարուցուել է քրէական գործ, որը յուսանք՝ կտայ այս հարցերի պատասխանները:

Այնչափ է, որ այս գաղտնալսման հրապարակայնացումն ուղղուած է նոր կառավարութեան վարկաբեկմանը ու Մարտի 1-ի գործով քննութեան ապալեզիտի մացմանը: Մենք միշտ նշում էինք, որ Մարտի 1-ի բացայայտումը ջարդելու է հակալեզիտութեան ողնաշարը, սակայն այնպէս ստացուեց, որ այս գաղտնալսումն է յաւակնում կոտորել գործի բացայայտման ողնաշարը:

Ու՞մ է դա ձեռնտու: Ի հարկէ՞ Ռոբերտ Քոչարեանին ու Սերժ Սարգսեանին ու բոլոր այն ներքին ու արտաքին խաղացողներին, ովքեր կարող են մտահոգութիւններ ունենալ Մարտի 1-ի գործով: Սակայն արդեօք իշխանութիւնից զրկուած այս անձինք կա-

Շաբ.ը էջ 19

Փաշինեանի Վախն ու Երկրի Ծանրացող Դրութիւնը

ԹԱՍԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Եկել է տնտեսական բարեփոխումներով տնտեսութեանը զարկ տալու ժամանակը, ֆէյսպուքեան ուղիղ եթերում յայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Ու նաեւ շղթայական ռեակցիա յարուցելու ժամանակը, երբ որ բազմաթիւ հարցեր կը լուծուեն եւ բազմաթիւ հարցերի լուծման շղթայական գործընթացը կը սկսի, այսինքն՝ նրանք, որոնք վերջնական լուծումներ չեն ստանալ, առնուազն նրանց լուծման գործընթացը կը սկսի», - ասել է նա:

Փաշինեանը ընդգծել է, թէ համոզուած է՝ ՀՀ քաղաքացիները լաւատես են. «Մեր ամենակարեւոր կարգախօսը, ըստ էութեան, արդէն իսկ իրականութիւն է դարձել, եւ այդ կարգախօսը հետեւեալն է, որ Հայաստանում իշխանութիւնը պատկանում է մէկ բարձրագոյն սուբեկտի ու այդ սուբեկտը հայ ժողովուրդն է»: Նա կրկին շեշտել է, որ ինքն իրեն վարչապետի կարգավիճակում համարում է ՀՀ քաղաքացիների ներկայացուցիչը. «Իմ այստեղ լինելը իմաստաւորուել է, իմաստաւորուած է ու կիմաստաւորուի միայն ու միայն այդ

կարգավիճակի բերումով»: Նրա խօսքով՝ Հայաստանում իշխանութեան ճակատագիրը որոշում է ժողովուրդը. «Այն պահին, երբ որ կը հեռանամ վարչապետի կարգավիճակից, պէտք է լինեն այլեւս ինստիտուցիոնալ երաշխիքներ, որ որեւէ մէկին հնարաւորութիւն չեն տալ իշխանութիւնը վերցնել ժողովրդի ձեռքից»:

Փաշինեանն ակնյայտօրէն գգում է, որ միայն հասարակական էջֆոր-իայով իշխանութեան մնալու հնարաւորութիւնները նեղ են: Գործնականում դա հասկանում են նոյնիսկ այդ յեղափոխական էջֆորիայով դեռ մինչեւ այսօր ապրողները:

Փաշինեանը վերջին շրջանում սկսել է շեշտել տնտեսական բարեփոխումների անցկացման անհրաժեշտութեան մասին, ինչը նշանակում է, որ նա զիտակցում է, որ ներդրումների կոչի, մենաշնորհների վերացման մասին ելոյթներով իրական շարժ ու զարգացում ապահովել հնարաւոր չէ:

Աւելին, առաջժամ, կողքից հետեւող մարդկանց մօտ տպաւորութիւն է ստեղծուում, որ գործող կառավարութիւնը առանձնապէս զլուրի չի հանում, կամ էլ՝ դեռ չի էլ փորձել խորանալ սոցիալ-տնտե-

սական ոլորտում, որպէսզի պարզի առկայ խնդիրներն ու լուծման ուղիները ներկայացնի:

Այսինքն, խոշոր հաշուով սոցիալ-տնտեսական իրավիճակի ուսումնասիրութիւն, գնահատականներ, խնդիրներ, ապա՝ առաջնահերթ նպատակներ, կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրեր դեռ եւս չեն ներկայացուել: Այսինքն՝ չկայ երկրի տնտեսական զարգացման, սոցիալական խնդիրների լուծման յստակ տեսլական, որը կը յուշէր, որ կառավարութիւնը առաջ է ընթանում՝ այս կամ, այն ուղով:

Լայն բարեփոխումների գործընթացը, մինչդեռ պէտք է վաղուց մեկնարկած լինէր: Փաշինեանը դա կազմակերպելու համար ունէր 100 օր, բայց կարծես տնտեսական ոլորտում ամէն ինչ ինքնահոսի էր թողնուած ու հիմա փաշինեանը ունենալով հասարակութեան մօտ հրապարակութեան վախի զգացումը՝ արդէն իսկ յայտարարում է տնտեսական բարեփոխումներով տնտեսութեանը զարկ տալու մասին:

Բայց այստեղ էլ Փաշինեանը գործելու համար շատ երկար ժամանակ չունի:

«ՀԱՅԵԼԻ



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԵՄՈԿՐԱՏ ԳՈՐԾԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵԱՋԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախկին Կարգապետ Յովիկ Աբրահամեանին Մեղադրանք Առաջադրուած է

Ազգային ժողովի նախկին նախագահ, նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեան յայտնած է, որ Յատուկ ֆինչական Մառաշուկիները (ՀՔԾ) իրեն մեղադրանք առաջադրած է եւ երկրէն չհեռանալու մասին ստորագրութիւն վերցուցած:



Նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեան

նաւորուած էր:

Յովիկ Աբրահամեան իր դէմ յարուցած գործը որակած է շինծու եւ կապ ունի Սեպտեմբեր 4-ին կայքերէն մէկուն տուած հարցազրոյցին մէջ իշխանութիւններու գործելաոճը քննադատելուն համար: «Զաւեշտալի է, երբ ոչ ականջահասնոյ հարցազրոյցից յետոյ մարդուն հրաւիրուած են ՀՔԾ, ակնյայտ կեղծ մեղադրանք առաջադրուած՝ նպատակ ունենալով լռեցնել ցանկացած այլակարծութիւն», - գրած է Աբրահամեան իր Ֆէյսբուքի էջին վրայ:

Իրաւապաշտպան Ժաննա Ալեքսանեան համաձայն չէ նախկին պաշտօնակցի պնդումներուն հետ:

«Յովիկ Աբրահամեանի կարողութիւնները, ունեցուած քր, սարերի վրայ կառուցուած առանձնատները եւ Մոնոմենտի իւրապատուկ առանձնատունը ցոյց էին տալիս նրա հարստութիւնն ու ունեցուածքը, որը, բնականաբար, իր քրտինքով չէր աշխատել: Բազմիցս Աբրահամեանի մարզում ականատես եմ եղել զինուորացիների դժգոհութեանը, թէ ինչպէս էին նրանք գրկուած՝ ջրել իրենց այգիները, թէ ինչպէս էր էդ ամէն ինչը Յովիկ Աբրահամեանի ձկներին ու լճերին»:

Հայաստանի Խորհրդարան Ընդունած է Ընտրախախտումները Քրեականացնող Օրէնսդրական Փոփոխութիւններ

Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ամբողջութեամբ ընդունած է ընտրական շարք մը յանցագործութիւններու համար պատասխանատուութիւնը խստացնող փոփոխութիւններու փաթեթը:

Արդարադատութեան փոխնախարար Արթուր Յովհաննիսեանի խօսքով՝ անոնք պիտի գործեն արդեն մայրաքաղաքի աւագանիի Սեպտեմբեր 23-ի ընտրութիւններուն:

Իշխանութեան ներկայացուցիչները պնդած են, որ նախաձեռնութեան նպատակը քաղաքացիներու ազատ ու անկաշկանդ ընտրութեան իրաւունքն ապահովելն է:

Քննարկումներու ժամանակ հանրապետականները, մասնաւորապէս, ընդվզած են կառավարութեան առաջարկած նոր փոփոխութեան՝ կաշառքի առաջարկը կամ խոստումն ընդունելու համար եւս քրեական պատիժ սահմանելու դէմ:

Ընտրական շարք ստանալը կամ պահանջելը այժմ ալ քրէօրէն պատժելի է, իսկ կաշառքի առաջարկը կամ խոստումն ընդունելու մասին ձեւակերպումը նոր էր, բայց նախ-

կին իշխանութեան ներկայացուցիչներու կարծիքով՝ անորոշ:

Արդարադատութեան փոխնախարարը խոստացած էր, ձեւակերպումը կը հանեն, եւ արդէն՝ երկրորդ ընթերցման դրուելիք նախագծին մէջ այն կը բացակայէր:

Ազգային ժողովի փոխնախագահ Արփինէ Յովհաննիսեանը, որ ձեւակերպումէն հրաժարելու կողմնակիցներէն մէկն էր, ամպիտոնէն յորդորեց բոլորին կողմ քուէարկել նախագիծին. - «Կառավարութիւնը ըստ էութեան դրսեւորեց բարձր փրոֆեսիոնալիզմ, արձագանգեց այն իրաւական մտահոգութիւններին, որոնք մենք ունէինք, եւ նախագիծը դարձաւ իրաւաբանօրէն գրազէտ ու ճիշդ նախագիծ»:

Հանրապետականներու կողմ քուէարկութեան մասին «Ելք» խմբակցութեան պատգամաւոր Հրաչ Յակոբեանը տեսակէտ յայտնեց՝ այլընտրանք չունէին. - «Ի՞նչ երեսով նրանք կարող են ասել, որ լաւ նախագիծ է: Ո՞ր կէտը լաւ էր, որ ընտրական շարք ստուգող պէտք ա դատուի, որ ընտրական շարք վերցնող-պահանջողը պէտք ա դատուի... Ոչ: Լաւ նախագիծ է»:

«Մարտի 1»-ին Բանակը Կրակած է Մարդոց, Բնակարաններուն Ուղղութեամբ. ՅՔԾ Պետ

Ասուլիսի ընթացքին ցուցադրուած մատեանը, ուր զինուորները ստորագրած են իրենց ստացած գումարներուն դիմաց

«Բանակը ոչ միայն մասնակցել է «Մարտի 1»-ին, բանակը կրակել է», այս մասին յայտարարած է Յատուկ ֆինչական ծառայութեան պետ Սասուն Խաչատրեանը՝ Ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէն Արթուր Վանեցեանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ:

«Մեր քննութեամբ արդէն իսկ հիմնաւորուել են, որ բանակը ոչ միայն մասնակցել է «Մարտի 1»-ի այս միջոցառումներին, բանակը կրակել է, բանակը կրակել է մարդկանց, բնակարանների ուղղութեամբ, այսինքն՝ բանակն ամբողջ ծաւալով մասնակցել է այս գործողութիւններին: Երկրորդ՝ ես ցանկանում եմ բացայտում անել, որը չէի ցանկանում անել, ճիշդ ասած, բայց այսօր առիթ է եւ պէտք է հասարակութիւնն իմանայ՝ այս գաղտնի հրամանից յետոյ, երբ որ որոշուել է, որ Երեւանում հաւաքել տարբեր զորամիւտորումներից զինծառայողների, սահմաններում շաբաթներով կանգնած զինուորը հերթապահել է առանց հերթափոխի եւ ստեղծուել են շատ վտանգաւոր իրավիճակներ եւ արդիւնքում, գիտէք, եղել է նաեւ տիւերսիս», - ըսած է Խաչատրեանը:

Անոր գնահատմամբ, ամենախայտառակ բանը, որ ըրած են այդ օրերուն բանակի հետ՝ զինուորներուն վարձկաններու վերածելն է:

րուն վարձկաններու վերածելն է:

«Արդէն իսկ քրեական գործով հիմնաւորուել է, որ օլիկարխների կողմից այդ ընթացքում՝ փետրուարի 23-ից յետոյ մինչեւ Մարտի 7-8 ընկած ժամանակահատուածը, բանակի զինուորներին բաժանուել են գումարներ նրա համար որպէսզի նրանք պաշտպանեն իրենց, իրենց ունեցուածքը, իրենց քաղաքական մկրտումները», - ըսած է Ազգային Անվտանգութեան Մառաշուկիան պետը՝ ցուցադրելով մատեան մը, որն, ըստ անոր, առգրաւուած է Յատուկ ֆինչական ծառայութեան քննիչի կողմէն:

«Այստեղ հատ-հատ նշուած են այն զինծառայողները եւ գումարների չափերը: Այդ գումարները հանուել են օլիկարխների, պետական բարձր պաշտօն զբաղեցնող անձանց հաշիւներից: Քոնքրետ անձանց հաշիւները կը հրապարակենք յետագայում, այս պահին ես չգիտեմ ոնց են սրա բացատրութիւնը տալու մեր երկրի նախկին ղեկավարները, ինչպէ՞ս են նրանք այս բանակի զինուորներին դարձրել վարձկաններ», - ըսած է Խաչատրեանը:

Հարցին, թէ անուններ պիտի հրապարակեն, Խաչատրեանը պատասխանած է. - «Անունները կը նշեմ յետագայում: Նշենք, որ փախնե՞ն»:

Սերժ Սարգսեանի Եղբորդին Ազատ Պիտի Արձակուի 50 Միլիոն Դրամ Գրաւի Դիմաց

Դատարանը հրապարակած է Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի եղբորդի՝ Հայկ Սարգսեանի խափանման միջոցի վերաբերեալ որոշումը. ան 50 միլիոն դրամ գրաւի դիմաց ազատ պիտի արձակուի՝ այդ գումարը վճարելուն պէս:

33-ամեայ Հայկ Սարգսեանը կայանաւորուած էր 11 յուլիսին եւ կը մեղադրուէր սպանութեան փորձի՝ 11 տարի առաջ տեղի ունեցած յանցագործութեան համար:

2007 թուականին Դաւիթ Սիմոնեանը հիւանդանոց տեղափոխուած էր հրազէնային վնասուածքով: Գործը, սակայն կարճուած էր,

քանի որ ոստիկանութիւն ներկայացած էր ոմն Արթուր Ղեւոնդեան եւ յայտնած, թէ անգգուշաբար կրակած է ընկերոջ վրայ: 11 տարի անց, սակայն, Դաւիթ Սիմոնեանը, որ վերջին քանիմը ընտրութիւններուն ժամանակ հանրապետականներու վստահուած անձը եղած է Երեւանի Կեդրոն վարչական շրջանի տեղաւորներէն մէկուն մէջ եւ մշտապէս խոչընդոտած է լրագրողներու աշխատանքը, նոր ցուցմունքներ տուած է՝ նշելով, որ իրականութեան մէջ իրեն փորձած են սպանել, իսկ սպանութեան փորձը կատարած է Հայկ Սարգսեանը:

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԼՈՒՐԵՐ

ԱԳ նախարար. Սուրիոյ Սեջ Յայ Մասնագետները Պիտի Գործեն Մարդասիրական Նպատակներով

«Սիրիայում բնակուող հայերի անվտանգութեան խնդիրը մեր օրակարգի կարեւորագոյն հարցերից մէկն է», - նշած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանը՝ անդրադառնալով վարչապետ Նիկոլ Փաշինեանի Մոսկուա կատարած այցին ետք ըրած յայտարարութեան, թէ Հայաստանը յառաջիկային Սուրիոյ մէջ մարդասիրական առաքելութիւն պիտի իրականացնէ:



Արտաքին Գործոց Նախարար Զօհրապ Մնացականեան

«Այդ տրամաբանութեամբ է, որ մենք գործում ենք եւ աշխատում ենք նաեւ մեր գործընկերների հետ: Գիտէք, որ այս հարցում նախկինում եւս Ռուսաստանի Դաշնութիւնը օգտակար է եղել, որպէսզի մենք կարողանանք ֆիզիքապէս հասցնել հումանիտար օգնութիւնը այնտեղ: Այս դէպքում եւս մենք աշխատելու ենք միասին, որպէսզի կարողանանք տեղում մեր ներդրումը ունենալ», - ըսած է Մնացականեանը:

թին», - նշած է Զօհրապ Մնացականեանը:

Արտաքին գործոց նախարարն անդրադարձած է նաեւ իր ատրպէյ-ճանցի պաշտօնակից էլմար Մամետ-իարովի հետ յառաջիկային նախատեսուած հանդիպման՝ նշելով, որ ժամկէտի վերաբերեալ յայտարարութիւն պիտի ընէ ատրպէյճանական կողմի հետ համաձայնեցուած ենք եղանակով. - «Ես փորձում են լինել շատ ճշգրիտ այդ հարցում եւ յայտարարութիւնները անել համաձայնեցուած ձևով: Մենք արդէն խօսել ենք նրա մասին, որ մենք ներգրաւուած ենք բանակցային գործընթացում, որ մենք արտայայտել ենք մեր հաւատարմութիւնը այդ գործընթացին եւ խաղաղ բանակցութիւններին»:

«Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ Պաշտպանութեան փոխնախարար Գաբրիէլ Բալայեանը մեկնաբանած է, որ Սուրիոյ պիտի չուղակուի զօրախումբ կամ զինուած ուժերու ստորաբաժանում, այլ միայն մարդասիրական մասնագէտներու խումբ՝ հիմնական՝ բժիշկներ եւ ճարտարապետներ, որոնք պիտի օգնեն Հայկազի խաղաղ բնակիչներուն: Սիրիա մեկնող խումբը պիտի գործէ Հայաստանի դրօշի ներքոյ:

«Սա հումանիտար գործողութիւն է մեզ համար առաջին հեր-

Նախագահը Հիւրընկալած է Ֆրանքֆոնիայի Սիջազգային Կազմակերպութեան Գլխաւոր Քարտուղարին



Նախագահ Արմէն Սարգսեան եւ Ֆրանքֆոնիայի գլխաւոր քարտուղար Սիշէլ Ժան

Նախագահ Արմէն Սարգսեան հիւրընկալած է Ֆրանքֆոնիայի (Ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան) գլխաւոր քարտուղար Սիշէլ Ժանը եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը:


Ողջունելով հիւրերը՝ Հանրապետութեան նախագահը նշած է, որ Հայաստանը կը կարեւորէ Ֆրանքֆոնիայի միջազգային կազմակերպութեան դերը՝ որպէս փոխգործակցութեան ու երկխօսութեան հարթակ եւ ուրախ է հիւրընկալել կազմակերպութեան 17-րդ գագաթնաժողովը: Նախագահ Սարգսեանն ընդգծած է գագաթնաժողովը բարձր մակարդակով իրականացնելու երկրի իշխանութիւններու վճռակա- նութիւնն ու հաւաստիացուցած, որ

Հայաստանը պատուով պիտի կատարէ իր յանձնառութիւնը:

Անդրադարձ կատարուած է Ֆրանքֆոնիայի միջազգային կազմակերպութեան գագաթնաժողովի շրջագիծէն ներս կազմակերպուելիք տնտեսական համաժողովին:

Նախագահ Սարգսեան ցանկութիւն յայտնած է, որ այն դառնայ աւանդական՝ նշելով, որ Հայաստանը կամրջող դեր կրնայ խաղալ հիւսիսի ու հարաւի, արեւմուտքի եւ արեւելքի միջեւ՝ դառնալ ոչ միայն աշխարհագրական, մշակութային, այլեւ տնտեսական կապերու, բարձր թեխնոլոգիաներու խաչմերուկ՝ օտարերկրեանց գործարարներու ու ներդրողներու առջեւ բանալով գործակցութեան նոր հնարաւորութիւններ:

Նիկոլ Փաշինեան. Հայաստանի եւ Վրաստանի յարաբերութիւնները փայլուն են



Փաշինեանի եւ Պախտաձէի գլխաւորած պատուիրակութիւններու միջեւ տեղի ունեցած բանակցութիւններու ընթացքին

«Վրաստանի վարչապետի կողմէն շատ բարեսէնչ ծրագիր է առաջարկուել, եւ մենք լիովին պաշտպանում ենք այդ ծրագիրը. յստակ խնդիր է ձեւակերպուել յառաջիկայ տարիների ընթացքում փոխադարձ առեւտուրը, առեւտրաշրջանառութիւնը հասցնել մէկ միլիառ տոլարի մակարդակի: Եւ սա մի թեմա է, որի նկատմամբ մենք բոլորս կարող ենք դիրքաւորուել, ունենալ յստակ ճանապարհային քարտէջ եւ պայմանաւորուած քայլերով գնալ դէպի խնդրի լուծումը», - բանակցութիւններու աւարտին հրաւիրուած համատեղ մամուլային ասուլիսի ժամանակ ըսած է Նիկոլ Փաշինեանը:

Բանակցութիւններէն ետք Վրաստանի վարչապետը նշած է, որ Հայաստանի ու Վրաստանի տարեկան առեւտրաշրջանառութիւնը կը հասնի 400 միլիոն տոլարի, իսկ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայութեան համաձայն, Հայաստանի առեւտրաշրջանառութիւնը Վրաստանի հետ 2017 թուականին կազմած է մօտ 249 միլիոն տոլար:

Հայաստան կատարած այցին առաջ Ատրպէյճանի մէջ առեւտուրի ծաւալներուն զարկ տալու մտադրութեան մասին յայտարարած Պախտաձէն նաեւ ընդգծած է,

թէ հայ-վրացական յարաբերութիւններուն մէջ կայ չօգտագործուած մեծ ներուժ:

Վրաստանի նորընտիր վարչապետը յայտնած է, որ իր երկիրը անցած է բարեփոխումներու մարտահրաւէրներով լի երկար ճանապարհ, հիմա ալ կ'աշխատին բարեփոխումներու նոր ծրագրերու վրայ եւ այդ հարցին մէջ եւս պատրաստ են համագործակցել Հայաստանի հետ:

«Մենք հասկցանք, որ մեզի պէտք է աւելի յաճախ հանդիպիլ եւ աւելի երկար գրուցել», - ըսած է Փաշինեանը, - «քանի որ հայ-վրացական օրակարգին մէջ քննարկման արժանի հարցերը շատ են: Ամէն պարագայի կրնանք արձանագրել, որ ամէն այցի հետ մեր երկիրներու յարաբերութիւններու մակարդակը աւելի կը բարձրանայ, միջոցառումներ կը բարեկամանական եւ աւելի ջերմ կը դառնայ»:

Նիկոլ Փաշինեանը չի շեղուցած է, թէ վարչապետ ընտրուելէն ետք իր Վրաստան կատարած այցի ժամանակ յարաբերութիւններու ինչպիսի բանաձեւ առաջ քաշած էր. Վրաստանի մէջ պէտք է համոզուած ըլլան, որ Հայաստանի եւ հայ ժողովուրդի կողմէն չկայ որեւէ դաւադրութիւն կամ սպառնալիք Վրաստանի կամ վրաց ժողովուրդի նկատմամբ եւ հակառակը:

Կը շարունակուի «Շանթ-2018» Զօրավարժութիւնը

Համապետական նշանակութեան «Շանթ-2018» զօրավարժութեան շրջանագիծէն ներս ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան վարչական համալիրին մէջ մամուլի ներկայացուցիչներուն ներկայացուած են զօրավարժութեան սենարով նախատեսուած գործողութիւնները: Այս մասին կը յայտնեն Պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան:

Պայմանականորէն փոխուած է տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը, սահմանին դրութիւնը սրուած է, կան կորուստներ: Նախարարութիւններն այժմ

կը գործեն արտակարգ ռեժիմով, քանի որ պայմանականորէն կը համարուի, որ կան նաեւ թեխնա- ծին ու բնական աղէտներ, ինչպէս նաեւ փախստականներու ներհոսքի վտանգ: Առկայ է պայմանական սպառնալիք, որ փախստականներու հետ Հայաստան կրնան ներթափանցել նաեւ ահաբեկիչներ:

Արտակարգ ռեժիմով իր գործառնութիւններն կ'իրականացնէ նաեւ ՀՀ Արտաքին գործոց նախարարութիւնը: Պայմանականորէն ՀՀ Արտաքին գործոց նախարարութիւն կանչուած են դեսպանները, որպէսզի տեղեկացուին առկայ իրավիճակի ու Հայաստանի դիրքորոշման մասին:

Զօրացիւք Օժանդակենք Փրկենք

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

Հայաստանի Մէջ Սինկափուրեան Դրաշքը Կիրառելի Չէ

«Մեզ մօտ պետութեանը խաբէր, պետութիւնից գողանալը յարգանքի արժանի արարքներ են», - լրագրողներու հետ հանդիպման ժամանակ նման կարծիք յայտնած է Պետական եկամուտներու կոմիտէի նախագահ Դաւիթ Անանեանը:

«Մեզ մօտ ձեւաւորուած չէ կարծիքը, որ պետութիւնից չգողանալը, պետութեանը հարկեր վճարելն ազգային անվտանգութեան տեսանկիւնից, հայրենասիրութեան առումով շատ կարեւոր եզրոյթներ են»:



ՊԵԿ նախագահ Դաւիթ Անանեան

Պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) նախագահը նշած է, որ այս պարագային Հայաստանի մէջ հնարաւոր չէ կիրառել սինկափուրեան հրաշքը: Անոր խօսքով՝ քանի դեռ Սինկափուրեան չենք ընդօրինակած հարկեր վճարելու պատրաստակամութիւնն, ուրեմն որոշակի ընելիքներ դեռ ունինք:

«Մենք ունենք ոլորտներ, որտեղ հարկեր չվճարելու մշակոյթ է ձեւաւորուել», - ըսած է Պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) նախագահը:

Դաւիթ Անանեանը որպէս օրինակ բերած է մշակոյթի ոլորտը՝ նշելով, որ մշակոյթին մէջ նման մշակոյթ չկայ: «Մենք ունենք սիրուած երգիչ-երգչուհիներ, բոլորս էլ գիտենք, որ սիրուած

երգիչ-երգչուհիները հայրենասիրական երգեր են գրում կամ կատարում այս կամ այն իրադարձութեան՝ մեր տիրութեան, մեր զարթօնքի օրերին, բայց մեր երգիչ-երգչուհիները առումով ես ուզում եմ մի բան ասել՝ նրանք տարեկան յայտարարագրեր չեն ներկայացնում», - նշած է Դաւիթ Անանեանը:

Այս տարուան 8 ամիսներու ընթացքին Պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) կողմէն հաւաքագրուած է 880.1 միլիառ դրամ հարկային եկամուտներ, որմէ 670.7 միլիառ դրամը՝ հարկային մարմիններուն կողմէն, իսկ 209.4 միլիառ դրամը՝ մաքսային մարմիններու:

Օսիբեանը Մարտի 1-ի Ցուցարարներուն Մօտ Չէ Տեսած

Ոստիկանութեան պետ Վալէրի Օսիբեանը չի բացառեր, որ 2008 թուականի Մարտի 1-ի գործին մէջ կան ընդգրկուած ոստիկաններ: «Արմէնբրես»-ի փոխանցմամբ, այդ մասին Օսիպեանն ըսած է կառավարութեան նիստէն ետք լրագրողներուն հետ զրոյցի ժամանակ՝ անդրադառնալով Մարտի 1-ի դէպքերով յարուցուած քրէական գործի շրջագիծէն ներս ոստիկաններու ներգրաւուածութեան հարցին:

«Ընդգրկուած են եղել տարբեր ստորաբաժանումներ, բայց դա չի նշանակում, որ բոլորը ենթակա են պատասխանատուութեան, կամ առհասարակ ենթակա են պատասխանատուութեան: Ինքնին փաստաթուղթ կեղծելը քրէօ-

րէն պատժելի արարք է, թէ ով է արել՝ չեմ կարող ասել, արդեօք հնարաւոր է անել՝ եկէք ոչ մի բան չբացառենք, եթէ այդպիսիները կան, թող պատասխանատուութեան ենթարկուեն», - նշած է Օսիբեանը:

Միաժամանակ, ոստիկանապետը վստահեցուցած է, որ Մարտի 1-ի դէպքերու ժամանակ ցուցարարներուն մօտ գէնք-գիւնամթերք չէ տեսած: «Բայց փայտեր եւ այլն բոլորս էլ տեսել ենք: Այս հարցերն ուղղէք այն մարդկանց, ովքեր այդ օրերին եղել են վերադաս», - ըսած է Օսիբեանը՝ նշելով, որ Մարտի 1-ի գործով ցուցմունք տալու չէ հրաւիրուած: Ոստիկանապետն ընդգծած է նաեւ, որ կը բացառէ Հայաստանի մէջ հանրահաւաքներու ժամանակ գոհեր ըլլան:

Հայաստան Ռուսաստան Յարաբերութիւններ

Շարունակուած էջ 1-էն

մատենակազմի համագործակցութեան ոլորտներում եւ ընդհանրապէս հումանիտար կապերի ամրապնդման առումով: Ի հարկէ, մենք շահագրգռուած ենք մեր յարաբերութիւնները հետագայ զարգացմամբ եւ սերտացմամբ. նկատի ունեմ ոչ միայն երկկողմ յարաբերութիւնները, այլեւ համագործակցութիւնը եւ Եւրասիական Տնտեսական Միութեան, եւ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան շրջանակում, եւ ընդհանրապէս միւս ոլորտներում»:

Լրագրողները հետ զրոյցի ընթացքին Փաշինեան անգամ մը եւս շեշտած է, որ այդ համագործակցութիւնը կայ, առաջ կ'երթայ եւ այս ոլորտէն ներս վիճակը նոյնպէս

աւելի լաւ է, քան նախկինին:

«Արդեօք Վլադիմիր Փուլին որեւէ հայաստանցի նախկին պաշտօնեայի հետ (խօսքը ենթադրաբար Ռուսերի Քոչարեանի մասին էր) ձակատագիրը քննարկուած է»:

այս հարցին Փաշինեան պատասխանեց՝ որեւէ նման հարց չէ քննարկուած:

Փաշինեանը նաեւ տեղեկացուց, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Փուլինի հետ չէ քննարկուած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) Ատրպէյճանի անդամակցութեան հարցը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ռուսաստան կատարած աշխատանքային այցի ընթացքին Մոսկուայի մէջ հանդիպում ունեցած ռուսաստանաբնակ հայագրի գործարարներու հետ:

Ռուսաստան Չեղեալ Յայտարարած է Միքայէլ Յարութիւնեանի Նկատմամբ Միջազգային Դետախուզումը

Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախկին նախարար Միքայէլ Յարութիւնեանի նկատմամբ միջազգային հետախուզումը Ռուսաստանի տարածքին չեղեալ յայտարարուած է: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնբրես»-ը, այս մասին յայտնած է «Ինթըրֆաքս»-ը՝ յղում կատարելով իր աղբիւրներուն:



ՀՀ պաշտպանութեան նախկին նախարար Միքայէլ Յարութիւնեան

«2008-ի Մարտի 1-ին Երեւանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն համար մեղադրուող Յարութիւնեանի նկատմամբ յարուցուած գործն ուսումնասիրելու ժամանակ որոշում կայացուած է Ռուսաստանի տարածքին հետախուզումը չեղեալ յայտարարել», - ըսած է գործակալութեան աղբիւրը:

Ան աւելցուցած է, որ այդ պարագային Ռուսաստանի մէջ Միքայէլ Յարութիւնեանին ոչինչ կը սպառնայ: Սակայն ան նշած է, որ Յարութիւնեանը կրնայ ձերբակալուիլ եւ փոխանցուիլ Հայաստանին, եթէ յայտնուի Անկախ Պետութիւններու Համագործակցութեան (ԱՊՀ) անդամ այլ երկիրներու մէջ:

Գործակալութեան աղբիւրը նաեւ յայտնած է, որ ՀՀ պաշտպա-

նութեան նախկին նախարարը ձերբակալուելու եւ Հայաստանին փոխանցելու մասին դիմումը Ռուսաստանի մէջ ստացած են որոշ ժամանակ առաջ ոչ թէ Հայաստանի զլխաւոր դատախազութեան, այլ միջազգային հետախուզման գծով: Անոր խօսքով՝ Յարութիւնեանը ձերբակալուելու թոյլտուութեան մէջ նշուած է նաեւ Ռուսաստանի մայրաքաղաքին մէջ անոր տան հասցէն:

Միջազգային Փորձագետները Պիտի Ուսումնասիրեն Ամուսարի Շահագործման Ազդեցութիւնը Ստորգետնեայ Զուրերուն Կրայ

Կառավարութեան պատուէրով 10 օրէն Հայաստան պիտի ժամանէ միջազգային փորձագէտներու խումբ՝ Ամուսարի ոսկիի հանքի շահագործման պարագային ստորգետնեայ շուրերուն վրայ հնարաւոր ազդեցութիւնն ուսումնասիրելու համար:

Պաշտօնավարման 100 օրն ամփոփելու ժամանակ այս մասին յայտարարած է բնապահպանութեան նախարար Էրիկ Գրիգորեանը:

«Այն պահին, երբ որ պետութիւնն ունի բաւարար հիմնաւորում՝ դիտականօրէն, մասնագիտօրէն եւ իրաւաբանօրէն, տեղեկատուութիւն, որ գործունէութիւնը բացասական ազդեցութիւն է ունենալու, դա ըստ էութեան նշանակում է, որ (Շրջակայ միջավայրի վրայ ազդեցութեան գնահատում) ՇՄԱԳ-ում ներկայացուած տեղեկատուութիւնը ճիշդ չի եղել, եւ կրկին օրէնսդրօրէն, նաեւ քաղաքական առումով պետութիւնը ու-

նի իրաւունք, որպէսզի համապատասխան ճիշդ որոշումը Հայաստանի Հանրապետութեան համար կայացնի», - փոխանցած է նախարարը:

Նախարարը նաեւ պարզաբանած է, թէ ինչ կրնայ ընել կառավարութիւնը, եթէ այս փուլին պարզուի, որ բնապահպանական վտանգներ, այնուամենայնիւ, կան. - «Առնուազն օրէնսդրութեան շրջանակներում դա կարող է համարուել նոր էքզոլոկիական գործօններ, եւ կարող է գնալ նոր փորձաքննական գործընթաց»:

«Ազատութեան» հարցին, թէ «Լիտիանի» ներկայացուցիչները կը խօսին միջազգային իրաւարարական դատարան դիմելու համար, Գրիգորեանն արձագանգած է. - «Իւրաքանչիւր անհատ, կազմակերպութիւն կարող է խօսել եւ ասել այն ամէնը, ինչ ուզում է: Դա չի նշանակում, որ այդ ամէնը լինելու է»:

Գաղտնալսուած է Խօսակցութիւնը

Շարունակուած էջ 1-էն

թեան ծառայութիւն (ԱԱԾ), որոնք վերջին շրջանին ստանձնած են անօրինականութիւնը արմատախիլ ընելու դերը: Հասարակութիւնը դրական ընդունած է իրենց աշխատանքը:

«3.5-4 ամսուայ ընթացքում այնքան գործ ենք արել, որ վերջին 10-20 տարուայ ընթացքում իրաւապահ մարմինները չեն իրականացրել», - ըսած է Վանեցեանը:

«Ես կառուած չեմ պաշտօնից, բայց կարծում եմ, որ շատ գործեր ունեմ անելու, որ վարկեանին հասարակութիւնը հրաժարականի պահանջ ներկայացնի, հրաժարական կը տամ», - ըսած է Վանեցեանը:

Նոյն պատասխանը տուած է նաեւ Սասուն իրաւաբանը՝ հանրային պահանջի պարագային հրաժարական կու տայ:

Համացանցի մէջ տարածուած էր հեռախօսային զաղտնալսուած զրոյցի ձայնագրութիւն, ուր Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէնը եւ Յատուկ Քննչական Ծառայութեան պետը կը քննարկեն Մարտի 1-ի գործը:

Գաղտնալսման մէջ, մասնաւորապէս կը խօսուի այն մասին, թէ ինչպէս դատաւորներէն մէկը զանգած է ԱԱԾ տնօրէնին եւ հարցուցած է Վանեցեանին նախագահ Ռուսերի Քոչարեանի խափանման միջոցի ընտրութեան հարցով ի՞նչ որոշում ահրաժեշտ է կայացնել:

Աղթամարի Սուրբ Խաչ Եկեղեցւոյ Մէջ Պատարագ Մատուցուեցաւ

Արամ Արք. Աթշեան Շնորհակալութիւն Յայտնած է Թուրքիոյ Իշխանութիւններուն



Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ Արք. Աթշեանը շնորհակալութիւն յայտնած է Թուրքիոյ իշխանութիւններուն Վանի Աղթամար կղզիին մէջ գտնուող Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ պատարագի իրականացումն արտօնելու համար, այս մասին կը գրէ Թրքական IHA գործակալութիւնը:

Յայտնի է, որ պատարագին մասնակցած է Թուրքիոյ զբօսաշրջութեան եւ մշակոյթի նախարար Մեհմէտ Նուրի Էրսոյը, որ հանդիսաւոր արարողութեամբ կղզիին մէջ աղանիներ թուցուցած է պատարագէն ետք: Անոր հետ մէկտեղ ներկայ գտնուած է նաեւ այլ պաշտօնատար անձինք:

Յայտնի է, որ պատարագի իրականացման առթիւ այժմեան Թուրքիոյ տարածքին գտնուող Վանի Աղթամար կղզիին մէջ ուժեղացուած են անվտանգութեան միջոցառումները, չէ թույլատրուած Հայաստանի դրօշով զբօսաշրջիկներու մուտքը, իսկ բուն պատարագը

շատերը լսած են դուրսէն: Ուխտագնացութիւնները դէպի Սուրբ Խաչ եկեղեցի կ'իրականացուին 2010 թուականէն, սակայն վերջին երեք տարիներուն Թրքական իշխանութիւնները կ'արգիլէին ամենամեայ պատարագի իրականացումը՝ պատճառաբանելով այն «առկայ վտանգներով»:

Սակայն այս տարի արարողակարգն իրականացուցելու թույլտուութիւն ստացուած է:

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին նորոգումէն ետք վերաբացուած է 2007 թուականին: Պատմական Հայաստանի տարածքին այն միակ եկեղեցին է, որուն գմբէթին վերանորոգումէն ետք խաչ բարձրացուած է: Հայկական ճարտարապետութեան գլուխգործոց համարուող եկեղեցիներէն մէկն այժմ թանգարանի կարգավիճակ ունի:


Յայտնի է, որ եկեղեցիին մէջ կարելի է պատարագ իրականացնել տարին միայն մէկ անգամ՝ Խաչվերաց տօնին նախորդող կիրակին:

«Պիտի Շարունակենք Մեր Պայքարը» Կ'ըսէ Կարօ Փայլան

Թուրքիոյ քրտամէտ ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան անդամ եւ Տիգրանակերտէն ընտրուած խորհրդարանի հարգազի պատգամաւոր Կարօ Փայլան առաջին անգամ ըլլալով հարցազրոյց մը տուաւ լրատուամիջոցներուն, նախորդ շաբաթ Պոլսոյ մէջ տեղի ունեցած «Շաբաթօրեայ Մայրեր» նախաձեռնութեան ցոյցին ընթացքին

ուսիկաններու հետ բախումէն ետք: Փայլան յայտնեց, որ ոստիկանները իսկապէս վատ վերաբերած են ցոյցի մասնակիցներուն հետ, իսկ ինք այդ վայրկեանին մոռցած է իր պատգամաւոր եւ քաղաքական գործիչ ըլլալու հանգամանքը՝ փորձելով պաշտպանել ընկերներն ու ցոյցին մասնակցողները: «Հոն Կարօ Փայլան, Հիւտա Քայա կամ Ահմետ Շըք չկար:

Թուրքիա Դիմած է Ինթրփոլին Հայասեր Ստաւորական Ռակէպ Զարաքոլուն Բերման Ենթարկելու Հրամանագիրով



Թրքական «Belge» հրատարակչութեան հիմնադիր-սնորհէն, «Ozgur Gundem» լրատուամիջոցի սիւնակագիր յայտնի իրաւապաշտպան, մտաւորական Ռազրի Զարաքոլուն Թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ ներառուած է հետախուզման մէջ գտնուող առաւել վտանգաւոր յանցագործներու ցանկին՝ «կարմիր ցուցակ»-ին մէջ: Այս որոշումը առնուած է Զարաքոլունի 7 տարի առաջ ունեցած ելոյթի մը պատճառով յարուցուած քրէական գործի ծիրէն ներս: Ան կը մեղադրուի ահաբեկչական կազմակերպութեան սատարելու մէջ:

Թուրքիա պահանջած է արտայանձնել այժմ Շուէտ բնակող մտաւորականը:

Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող եւ դատապարտող Զարաքոլուն 2011-ի Հոկտեմբերին կալանաւորուած է վերոնշեալ մեղադրանքով, սակայն 2012-ի Ապրիլին

ազատ արձակուած է, իսկ 2013-ին տեղափոխուած է Շուէտ:

Թեմային շուրջ Զարաքոլուն Թրքական «Evrensel» պարբերականին յղած նամակին մէջ ըսած է. «Ըստ հուլիանի որոշ մարդոց դարձեալ անհանգստացուցած են իմ յօդուածները, ինչպէս նաեւ այն, որ ես կը շարունակեմ աջակցել մարդու իրաւունքներու պաշտպանութեան, խօսքի ազատութեան ու կը պաշտպանեմ խաղաղութիւնը: Թող անհանգստանան: Իսկ մենք կը շարունակենք մեր ճանապարհը»:

Յիշեցնենք, որ Թուրք հրատարակիչ, մարդու իրաւունքներու պաշտպան Ռազրի Զարաքոլուն 2011-ին Հայաստանի Ազգային գրադարանին կողմէ պարգևատրուած է Յակոբ Մեղապարտի անուան մետալով՝ որպէս հրատարակչական մեծ գործունէութիւն ծաւալող անձ, որ նաեւ տասնեակ գիրքեր նուիրած է Ազգային գրադարանին:

Բոլորս այդ պայքարին մէջ զինուոր էինք: Մենք դէմ առ դէմ կանգնած ենք մեծ անխղճութեան մը հետ: Մենք պիտի շարունակենք դիմադրել այդ բոլորին», ըսաւ Փայլան՝ աւելցնելով, որ անկախ ներքին գործոց նախարարին սահմանած արգելքէն, «Շաբաթօրեայ Մայրեր»-ու ցոյցերը պիտի շարունակուին:

«Նախարար Սուլէյման Սոյլուի յայտարարութենէն կ'երեւի, որ «Շաբաթօրեայ Մայրեր»-ու 701-րդ ցոյցը նոյնպէս պիտի արգիլուի: Սակայն մենք դարձեալ պիտի շարունակենք այնտեղ գտնուիլ: Ինչ որ ըսեն մայրերը, այդ պիտի

ընենք. անոնց կողքին պիտի ըլլանք», ըսաւ ան:

Նոյն ցոյցին մասնակցած Առատ Տինք նոյնպէս նման յայտարարութիւն մը կատարեց «Ակօս»-ի հետ հարցազրոյցի մը ընթացքին:

«Շաբաթօրեայ Մայրեր»-ու 700-րդ մէկտեղումը մարդու իրաւունքներու արժէք ընծայող բոլորին համար կարեւոր դէպք մըն էր: Սակայն անակնկալ որոշումով մը ներքին գործոց նախարարութիւնը արգիլեց ցոյցը: Այդ խառնակութեան մէջ 47 անձեր բերման ենթարկուեցան» ըսած է Առատ Տինք:



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



WELCOME HOME & AUTO INSURANCE

Along with all of our other *Trusted Insurance Services*






We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9305

Նիկոլ Փաշինեանի Առաջին Սեպտեմբերը

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

Մինչ հայաստանեան մեղիա-փորձագիտական հարթութեան վրայ փորձ է արուում դիտարկել ու քննարկել Փաշինեան-Պուտին հանդիպումն ու այդ համատեքստում հայ-ռուսական յարաբերութեան հեռանկարը, յատկապէս առկայ յայտնի դնահատականների ֆոնին, որ գալիս էին յատկապէս նախկին իշխանութեանը յարող շրջանակներից, արդէն մօտենում է Նիկոլ Փաշինեանի՝ Ֆրանսա կատարելիք այցը: Փարիզում Սեպտեմբերի 14-ին նա կը հանդիպի էմանուել Մակրոնին:

Այդ այցն ուշագրաւ է ոչ միայն այն հանգամանքով, որ տեղի է ունենալու Պուտինի հետ երրորդ հանդիպումից մէկ շաբաթ անց: Բանն այն է, որ այցից մօտ մէկ ամիս անց Ֆրանկոֆոնիայի վեհաժողովի շրջանակում Հայաստան է ժամանելու նաեւ Ֆրանսայի նախագահը, եւ այդ առումով առավել հետաքրքիր է, որ Նիկոլ Փաշինեանն է նախ այցելում Ֆրանսա՝ մինչ այդ: Այստեղ կարող է լինել իհարկէ որոշակիօրէն քաղաքական-սուբորդինացիոն տարր: Այսինքն՝ նկատի ունենալով թէ՛ Ֆրանսայի դերը Եւրոպայում ու միջազգային ասպարէզում, թէ՛ այդ համատեքստում հայ-ֆրանսական յարաբերութեան առանձնատարակն շանակութիւնն ու բնոյթը, Փարիզն ու Երեւանն ըստ երեւոյթին, այսպէս ասած, պահպանում են այդ առումով ստատուս քվոն, եւ նախ Հայաստանի առաջնորդն է այցելում Փարիզ, արժանանում ընդունելութեան, յետոյ նոր Երեւան կ'ժամանի Ֆրանսայի առաջնորդը: Իսկ այդ հանգամանքը այդուհանդերձ յարաբերութիւնների պատմական կոնտեքստում միջազգային ասպարէզում ամենեւին էլ անկարելի է, թէկուզ եւ ըստ էութեան դետալ է:

Միեւնոյն ժամանակ, հնարաւոր է նաեւ դիտարկել տարբերակը, երբ Հայաստանը եւ շուրջն առկայ պրոցեսները դինամիկ ու յագեցած փուլում են այնքան, որ մէկ ամիսն անգամ բաւականաչափ ժամանակ է, եւ հայ-ֆրանսական բարձր մակարդակի հանդիպումը պահանջել է աւելի մեծ արագութիւն եւ խտութիւն: Այսինքն՝ առկայ են հարցեր, որոնք պահանջել են Մակրոն-Փաշինեան հանդիպում աւելի շուտ, քան մէկ ամիս ժամկետը:

Այդ հարցերը կարող են թէ՛ առնչութիւն ունենալ նաեւ Պուտին-Փաշինեան օրակարգին, թէ՛ միեւնոյն ժամանակ պայմանաւորուած լինել այլ՝ ընդհուպ ներքին հանգամանքներով:

Ի դէպ, այդ համատեքստում արժէ թերեւս արձանագրել կարեւոր մի հանգամանք, որ Սեպտեմբերը Հայաստանի նոր իշխանութեան համար փաստօրէն դառնում է երկու ուշագրաւ գուգահեռի ամիս՝ Երեւանի աւագանու ընտրութիւն, որը թերեւս առանց չափազանցութեան հնարաւոր է դիտարկել ոչ հարիւր տոկոսով, սակայն հական նախապարժանք եւ ստուգարք, քննութիւն խորհրդարանի ընտրութիւնից առաջ, այն էլ՝ մի քանի կարեւոր առումներով, եւ միւս կողմից՝ այն դառնում է արտաքին քաղաքականութեան ընդգծուած աշխուժութեան եւ յագեցածութեան ամիս:

Սեպտեմբերի 8-ին Փաշինեանը Մոսկուայում հանդիպեց Պուտինի հետ, 14-ին Փարիզում կը հանդիպի Մակրոնի հետ, մինչ այդ 10-ին Երեւանում հիւրընկալում է Վրաստանի վարչապետին, ինչը եւս չափազանց կարեւոր ուղղութիւն է Հայաստանի համար մի շարք առումներով, իսկ Սեպտեմբերի վերջին էլ Նիւ Եորքում սպասուում է հանդիպում ԱՄՆ նախագահ Թրամփի հետ, եթէ իհարկէ յաջողութեամբ ընթանայ դրա նախապատրաստական աշխատանքը, որի առկայութեան մասին յամենայնդէպս յայտարարել են թէ՛ ամերիկեան, թէ՛ հայկական կողմերը: Բոլոր դէպքերում ասանակած է, որ ՄԱԿ գլխաւոր ասամբլեայի առիթով Նիկոլ Փաշինեանի՝ Նիւ Եորք այցը, անկախ Թրամփի հետ պաշտոնական հանդիպման լինելը չլինելուց, ունենալու է բաւականին հական նշանակութիւն արտաքին քաղաքական եւ անվտանգային ռազմավարութեան տեսանկիւնից:

Այդ իմաստով ներքին քաղաքական «ստուգողական» պրոցեսի եւ արտաքին քաղաքական այս ընդգծուած գուգահեռների առկայութիւնը տալիս է բաւականին ուշագրաւ մտորումների ու եզրակացութիւնների առիթ, որն ի մի բերելով, իհարկէ, ընդհանուր համատեքստում՝ հնարաւոր է բնորոշել Հայաստանում նոր իշխանութեան առնուազն ներկայիս փուլի բիւրեղացման շրջան:

Նախկին Դիւանագետները Դրական կը Գնահատեն «Դեսպաններու Ուղերձը» Ստորագրած Արմէն Բայբուրդեանի Վերադարձը ԱԳՆ Համակարգ



«Արմէն Բայբուրդեանը քաղաքային դիւանագէտ է, որը երկար տարիներ բարձր եւ պատասխանատու պաշտօններ է զբաղեցրել Արտաքին գործոց նախարարութեան համակարգում. Բայբուրդեանին նոր դիւանագիտական պաշտօնում նշանակելն ազդարարում է նրա վերադարձը Արտաքին գործոց նախարարութեան համակարգ»:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղար Տիգրան Բալայեանն այսպէս արձագանգած է «Ազատութեան» հարցին՝ արդեօք 2008-ի Մարտի 1-ի արիւնալի իրադարձութիւններէն առաջ Արտաքին գործոց նախարարութեան հեռացուած դիւանագէտներէն մէկուն վերադարձը համակարգ կը վկայէ, որ իշխանութիւնները կ'ընդունին, որ երկարամեայ աշխատանքային փորձ ունեցող դիւանագէտները աշխատանքին ազատելը քաղաքական պատճառ ունենէր:

2008 -ի Փետրուարին, Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի հրամանագրով, ան ու շարք մը այլ դիւանագէտներ ազատուած էին զբաղեցուցած պաշտօններէն՝ զրկուելով արտակարգ եւ լիազօր դեսպանի դիւանագիտական աստիճանէն:

Նշուած դիւանագէտները ստորագրած էին, այսպէս կոչուած, «դեսպաններու ուղերձը», որուն մէջ, մասնաւորապէս, նշուած էր. «Կարելոյնով երկրում կայունութեան պահպանման եւ հասարակական համաձայնութեան անհրաժեշտութիւնը, մեր հայրենակիցներին, յատկապէս երկրում հասարակա-

կան կարգի ու անդորրի ապահովման համար պատասխանատու բոլոր կառույցների ներկայացուցիչներին, կոչ ենք անում գերծ մնալ ուժի միջոցով ինդիւրներ լուծելու գալթակողութիւնից»:

Հայ Ազգային Քոնկրէսի ներկայացուցիչ վրատիմիր Կարապետեանը, որ 2006-2008 թուականներուն Արտաքին գործոց նախարարութեան մամլոյ խօսնակն էր «Ազատութեան» փոխանցած է՝ այն ժամանակուայ իշխանութեան կողմէն դիւանագէտները հեռացնելը երկրին մէջ սահմանադրական կարգը տապալելու քայլերու տրամաբանական շարունակութիւնն էր:

«Դա նշանակում էր, որ իշխանութիւնն արդէն 0038 հրամանը ստորագրելով՝ որոշում էր կայացրել, որ գնալու է ամենակոշտ գործողութիւնների: Մենք ամէն օր տեղեկութիւններ էինք ստանում, որ իշխանութիւնը պատրաստուում է բռնի ուժով ցրել ընտրութիւնների կեղծման դէմ բողոքի դուրս եկած ժողովրդի հաւաքը, եւ հենց այդ ժամանակ էր, որ մենք հանդէս եկանք կոչով, որպէսզի բռնութիւն չգործադրուի: Եւ շատ կարեւոր է, որ մենք նաեւ գնահատական տուցինք կեղծուած նախագահական ընտրութիւններին, որը համահունչ էր միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնների գնահատականին: Մեր յայտարարութեան հիմքում այն մտահոգութիւնն էր, որ նման բռնութեան գնալով՝ Հայաստանի վարկը կտրուկ անկում է ապրելու, եւ արդիւնքում հենց նման պատկեր էլ մենք ունեցանք», - ըսած է Կարապետեանը:

INNOVATIVE

Designs Manufacturing, Inc.

idmifurnishings.com

Փաստինայի Հայուրիւնը Նշեց Իր Հոգեւոր Հովիւին՝ Տէր Սարգիս Աւագ Քահանայ Փեթոյեանի Քահանայութեան 20-Ամեակը



Օգոստոս 2018, Սիտնի, Աւստրալիա: Քաղաքի կեդրոնական մասին մէջ կը շրջագայի մ' վայելելով անոր ու բնութեան արտասուտը գեղեցկութիւնը: Բայց այդ գեղեցկութեանը մէջ կար նշանաւոր երաժիշտ-յօրինող Վերտի «Այտա» օփերայի ներկայացումին նկարչապատարարութիւնը, որ ողողած էր ամբողջ փողոցները: Յայտարարութիւնը կ'ընդգրկէր երիտասարդ երգչուհիի մը նկարը, որ պիտի մարմնաւորէր Այտան ու ներկայացումի թուականները:

Բայց երիտասարդ երգչուհիին նկարը: Ծանօթ էր ու, տակաւին, անոր աչքերը ունէին խօսող հաղորդականութիւն մը: Եւ ինչպէ՞ս չխօսէին, երբ այդ աչքերը «հայու աչքեր» էին, ու իմ գուշակած «ծանօթ»-ի նկարը դարձաւ իրական:

Նախապէս Արոյեանին առաջին անգամ հանդիպած էի օգոստոս 1999-ին, երբ ես առաջին անգամ ըլլալով Սիտնի այցելած էի: Անոր ծնողքին՝ Սեմին եւ Լուսինին հետ մտերիմ ու ընտանեկան բարեկամներ ենք. այս իմաստով ալ նաեւ ծանօթացած՝ իրեն: Այդ օրերուն պարմանուհի Նախապէս երգարուեստի մէջ իր առաջին փորձերը կը կատարէր: Հայ աւետարանական եկեղեցիին մէջ չափազանց ան իր մասնակցութիւնը եթէ բերաւ այն ժամանակ՝ թէկուզ պատանեկան այդ առաջին փորձին երկչոտութեամբ, բայց կարելի էր տեսնել իր տաղանդն ու ապագայի նկատմամբ իր տեսլականները:

Այդ տեսլականը այսօր դարձած էր իրական: Երկար տարիներ ետք արդէն կը խօսէի երիտասարդ ու վաստակ շահած երգչուհի-արուեստագէտին հետ, որ արդէն իր հաստատ դիրքը ունի Աւստրալիոյ օփերայի ծրագրաշարին մէջ: Եւ ինչ խօսք, որ Նախապէս մասին շատ բան կը խօսուի...

Իսկ խօսուածը... Եթէ իր երաժշտական տաղանդն է, որ գինք հասցուցած է Աւստրալիոյ օփերայի մէջ նշանաւոր մեներգող-մենակատարի դիրքին, բայց նաեւ՝ որպէս հայ երգչուհի:

«Իմ ծնողքիս քաջալերանքը մեծ եղաւ իմ երաժշտական ասպարէզիս մէջ», ըսաւ Նախապէս: Ան երախտապարտ զաւակ է, որ շատ բան կը պարտի իր ծնողաց, որոնք գինք քաջալերած են երաժշտական բարձրորակ այս ձգտումին հասնելու: Նախապէս իր երաժշտական

ուսումը ստացած է Սիտնիի, Իտալիոյ Թասքանի քաղաքին եւ Նիւ Եորքի մէջ: Ան տիրացած է շատ մը մրցանակներու, Աւստրալիոյ եւ այլ երկիրներու շատ մը մրցութիւններու ընթացքին:

Բայց Նախապէս մէջ կայ հայ երգչուհիի տիպարը: Եթէ Սիտնի ծնած է, բայց ան հայեցի ու քրիստոնէական դաստիարակութիւն ստացած է իր ծնողքէն եւ եկեղեցիէն: Հայրը՝ Սեմը, Կիպրոսի Մելգոնեանին մէջ ստացած է իր դաստիարակութիւնը, իսկ մայրը Լուսինը՝ Գահիրէի Գալուստեան վարժարանին մէջ: Այս երկու սփիւռքահայ կրթական «ամրոցներէն» կայ մէկ խօսող արդիւնք-վկայութիւն մը. հայուն շարունակականութիւնը... Նախապէս՝ հայ երգչուհին...

«Ես իմ հայ ժողովուրդիս համար կ'ուզեմ երգել», կ'ըսէ Նախապէս: Այս իմաստով, ան Սեմ եղեռնի հարիւրամեակին առիթով կըրցած է բեմականացնել երաժշտական յօրինում-մտայղացում մը՝ «Հակական ուղեւորութիւն մը» նիւթով: Ան կը ներկայացնէ հայ որբի մը՝ Պայծառին կեանքը, թէ ինչպէ՞ս Յեղասպանութենէն ետք, եթէ վերապրեցաւ, բայց մնաց միշտ հայուն «Յոյսին» կառչող անհատը, որ ամուր պահեց իր հայկական եւ քրիստոնէական ինքնութիւնը եւ... վերապրեցաւ: Եթէ Պայծառը Նախապէսին մեծ ծնողն էր, բայց նաեւ՝ ան ամբողջ հայ ժողովուրդին իրական կեանքի տիպարները... Տիպարներ, որոնք վերապրեցան...

Նախապէս իր օփերայի ներկայացումներուն մէջ իր ստանձնած դերերը կ'ապրի իրենց հարազատութեամբ: Ան այնքան կը նոյնանայ իր ստանձնած կերպարին, «որ կու լամ իրական, երբ պարտադրուած եմ լալու», կ'ըսէ ան: Եւ այս իմաստով իր «Հայկական ուղեւորութիւն մը» երաժշտական բեմականացումը յաջողութեան հասաւ՝ մեկնելով իր դերին ստանձնած հարազատութեան գիտակցութենէն: Այնքան հարազատ եղած է, որ ոչ հայ հանդիսատեսը կըրցած է նոյնանալ Յեղասպանութեան հաւերութեան մէջ, երբ նոյնիսկ առաջին անգամ է, որ կը լսէր այս հաւերութեան մասին: Նախապէս յաջողած է պատմել իր՝ հայուն պատմութիւնը իր երաժշտութեան միջոցով...

«Ես հպարտ հայ եմ, - ըսաւ Նախապէս, - եւ այս իմաստով, կ'ուզեմ իմ բաժինս բերել իմ ժողովուրդիս կեանքին համար»: «Հայկական ուղեւորութիւն մը» ձեռնարկին ամբողջ հասոյթը տրամադրուած է Սուրիահայութեան օգնութեան ֆոնտին: Ու տակաւին, ան չի զլանար առանց ակնկալութեան իր բաժինը բերելու որեւէ հայկական-բարեսիրական ձեռնարկի... Նոյնիսկ իր ճանապարհորդութեան ծախսերը ինք կը հոգայ, երբ կը հրաւիրուի ուրիշ երկրէ մը՝ հայկական ձեռնարկի մը իր բաժինը բերելու համար:

2012-ին Երեւանի մէջ կու տայ իր հայաստանեան առաջին երգահանդէսը Արամ Խաչատուրեանի տուն-թանգարանի սրահին մէջ: «Երբ «Ձուարթնոց» օղակայան ոտք դրի, աչքերէս արցունք հոսեցան», ըսաւ Նախապէս: «Ամէն տեղ հայերէն էր», շարունակեց ան: Բայց Միծեռնակաբերդի այցելութիւնը եղած էր Նախապէսի կեանքին համար մեծ ազդեցութիւն-անկիւնադարձ: «Միծեռնակաբերդը այցելութեանս ետք որոշեցի բեմականացնել «Հայկական ուղեւորութիւն մը» երաժշտական մտայղացումը», ըսաւ Նախապէս:

«Այտա» օփերայի՝ Նախապէսի Սիտնիի ելոյթին չկրցայ ներկայ ըլլալ: Պէտք էր ճամբորդէի, բայց իմացայ, որ Նախապէս գերազանցած է Այտայի կերպարին մէջ իր ձայնովը ու նաեւ դերակատարութեամբ:

Նախապէս պատանեկան օրերէն աստիճան առ աստիճան սկսաւ բարձրանալ՝ մինչեւ իր երիտասարդական ու չափահասութեան

տարիքին ամրապնդելով իր դիրքն ու տաղանդը երաժշտութեան եւ օփերային արուեստին մէջ: Այս իմաստով, Նախապէս մէկ լաւագոյն ապրող վկայութիւնն է «Հայկական ուղեւորութեան մը»: Ա՛յն հայկական ուղեւորութեանը, որ Յեղասպանութեան հաւերութեանէն ետք շարունակուեցաւ վերապրելու տեսլականով... Այս վերապրելն է, որ դրսեւորեց հայուն հպարտութիւնը: Նախապէս փաստեց, որ կ'ըլլայ եղեր... վերապրիլը...


Նախապէս Արոյեանը իր ստացած բեմական կերպարները իրենց սոսկ հարազատութեան մէջ չի ներկայացնէր միայն, այլ ան իր իսկական կեանքով եւ իր հարազատութեան մէջ կ'ապրի հպարտութեամբ:

Հայը իր հայկական «հաւեր» ուղեւորութեան մէջէն եթէ դուրս եկաւ որպէս վերապրող ժողովուրդ, որովհետեւ կառչեցաւ իր հարազատ ինքնութեան եւ անոր հպարտութեան: Հարազատ ինքնութիւնը՝ իր հայկական ու մշակութային բոլոր լծակներով: Այս ինքնութեան վրայ ու անոր համար հայը իր հպարտութիւնը դրաւ որպէս վերապրելու միակ գրաւական:

Նախապէսին հայկական ուղեւորութիւնը: Հոն, ուր ան մինչեւ այսօր կ'ապրի իր հայկականութիւնը՝ իր հարազատութեամբ եւ հպարտութեամբ:

Բայց չուշացան իմ մտորումներս: Այս որքա՞ն տաղանդ եւ կարողականութիւն կայ մեր հայկական սփիւռքեան իրականութիւններուն մէջ: Նախապէս ու տակաւին՝ ուրիշներ... Տաղանդներ, որոնք եթէ քով-քովի գան, կրնան կազմել հայկական մեծ միտք, բայց մանաւանդ՝ ուժ... Միտքն ու ուժը որքան կարեւոր են մեր ուղեւորութեան շարունակականութեան գործընթացքին համար: Բայց այս միտքը եւ ուժը ո՞ւր եւ որո՞նք պիտի կարենան համախմբել իրարու հետ...

Եթէ պիտի շնորհաւորենք Նախապէսին իր ասպարէզային նուաճումին եւ անոր երիտասարդ հայկական կեանքին մէջ ու կերտած հարազատութեան եւ հպարտութեան համար, բայց մեր բոլորին համար կայ մէկ իրագործելիք մարտահրաւէր, որ՝ հայկական հարազատութեամբ եւ հպարտութեամբ է, որ մեր «հայկական ուղեւորութիւնը» իր ամբողջութեան մէջ պիտի տանինք դէպի լուսաւոր ապագայ...



Կազմակերպութիւնը
 ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 Լուս ԱճճԵԼՍԻ Մասնաճիւղին

ԳՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Ուիլիամ Մարոյեան 110 ամեակ
ՄԱՐԴՆ ՈՒ ԳՐԱԳԵՏԸ

Բանախօս
ՓՐՈՖ. ՕՇԻՆ ՔԵՇԻՇԵԱՆ

Ելոյթ կ'ունենան
ԵՐԿԱՅԻՆ ՏԱԳԵՐ (հրաժշտական)
ԱՐՇՕ ՍԵԼԻՔԵԱՆ (ընթերցում)

Հանդիսավար
ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ

ՈՒՐԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 28, 2018
 Երեկոյեան 7:30-ին

ԿԼԵՆՏԵՅԼԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԳԱՐԱՆԻ ՍՐԱՅ
 222 E. Harvard Street - Glendale
 Validated parking at Marketplace parking structure Harvard & Maryland

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ / ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

Ոչ Շատ Ցաւոտ Կամիթ ՌԻԻԼԵԱՄ ՍԱՐՈՅԵԱՆՆ ՈՒ ԻՐ «ՇԱԼՈՒԱՐԸ»...

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Այս օրերին ողջ հայ աշխարհի մտաւորականութեան (եւ ոչ միայն) բեւեռուած է մեծանուն գրող Ռիլեամ Սարոյեանի Գալիֆորնիայի Ֆրեզնօ քաղաքի տուն-թանգարանի վրայ, որի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ անցեալ ամսուայ նախաՎերջին օրը՝ Օգոստոսի 30-ին, ազգային արժանապատուութեան մի նոր ալիք առաջ բերելով հայ գրողների եւ գրասէր հասարակութեան հոգիներում: Միայն զարմանքով կարելի է նկատել, որ նման համաշխարհային իրադարձութեանը ներկայ չեն եղել հայրենիքի ներկայացուցիչներ ոչ Մշակութի նախարարութիւնից, ոչ Սփիւռքի նախարարութիւնից: Եզրակացութիւնը թողնում էմ ընթերցողին...

Հայրենի եւ սփիւռքահայ մամուլը լայնօրէն անդրադարձաւ այդ կարեւոր իրադարձութեանը: Կասկածից վեր է, որ նման մի «չարչրկուած» իրադարձութիւնը էլ աւելի կը նպաստի հայաշատ Ֆրեզնօ քաղաքի մշակութային կեանքի աշխուժացմանը եւ աւելի կամ պակաս չափով հնարաւորութիւն կը ստեղծուի հիմնականում անտեսուած հայաշատ կենտրոնը էլ աւելի ճանաչելի դարձնել օտար հասարակութեանը:



պատաստի առջեւ:
- Ոչ, յարգելի Տիկին Անուշ Սեդրակեան, մի մոռանաք, որ դուք ներկայացնում էք աշխարհի մեծերից մեծին, ծնունդով հայ, Բիթլիցի Ռիլեամ Սարոյեանին: Նկատի առնելով ձեր գիտելիքները, հեռուստատեսութիւնը ձեզ է վստահել ՄԵԾ գրողին ներկայացնել մի լիոնաւոր հեռուստադիտողներին:

Եւ յետոյ, ի՞նչպէս է, որ դուք Սարոյեանի մանկութեան ու պատանեկութեան մասին պատմելիս, տասը, գուցէ եւ աւելի անգամներ, շեշտում էք ՇԱԼՈՒԱՐ (հայաստանեան ուղղագրութեամբ՝ ՇԱԼՎԱՐ, - Հեն.Ա.) ոչ հայերէն բառը եւ անդադար կրկնում էք՝ «չալվարը երկար էր, ինչ տառապանքով ձեռք բերեց շալվարը, արդուկելիս այրեց շալվարը» եւ այսպէս՝ շարունակ՝ շալվար, շալվար, շալվար:

- Ինչ է, դուք չգիտէ՞ք այդ բառի հայերէնը՝ ՏԱՐԱՍ: Ծաղուարը թրքերէն է եւ որպէս տղամարդու հագուստ՝ բնաւ նման չէ մեր իմացած տաբատին: Այն թրքերի մօտ երկարաւուն, լայնից էլ լայն «ոտքերով» ազգային տղամարդու հագուստ է, որ մինչեւ օրս էլ տարածուած է Թուրքիայի բազմաթիւ գիւղական վայրերում:

Ես բնաւ մտադրութիւն չեմ ունեցել եւ չունեմ վարկաբեկելու ձեր անձը եւ կասկածել ձեր գիտելիքների վրայ: Քաւ լիցի: Այս յօդուածի սկզբում ասացի, որ դուք Ռիլեամ Սարոյեանի մասին ունեցած գիտելիքներով եւ փաստացի տեղեկութիւններով համապարփակ տեղեկութիւններ փոխանցեցիք լայն հասարակութեանը: Ես այս՝ պատիկ մի խայթոցով ցանկացայ Ձեզ զգաստութեան կողմ ուղղել եւ յիշեցնել, որ հեռուստատեսային պատաստի առջեւ երեւալուց չունեմ պետք է մշտապէս աչքի առջեւ ունենալ հեռուստադիտողին՝ ամենամանաւ դատաւորին եւ ուշադրութիւն դարձնել թէ օրուան համապատասխան հագուկապին եւ թէ մաքուր գրական հայերէնով ելույթ ունենալու հրամայականի վրայ:

Այս ամէնով հանդերձ, ասել չէ, թէ սխալներ չեն կարող լինել, բայց անհրաժեշտ է տեղում իսկ, նոյն վայրկեանին ուղղել սխալը, ապա թէ ոչ՝ անդադար կրկնելով՝ Շալվար, շալվար, շալվար՝ հեռուստադիտողը հաստատ կը համոզուի, որ դուք իսկապէս չգիտէք այդ բառի հայերէնը, որ է՝ ՏԱՐԱՍ: Ուշադիր եղէք...

ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՍԱՐՈՅԵԱՆԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀԻՍԸ ԴՐՈՒԱԾ Է ՍԱՐՈՅԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՆՈՐ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՄԸ



Ուիլիամ Սարոյեանի ծննդեան 110-ամեակին ընդառաջ, հայրենի «Անտարես» հրատարակչութիւնը Ձաւէն Պոյաճեանի թարգմանութեամբ ընթերցողին կը ներկայացնէ անուանի գրողին «Հայրիկ, դու խենթ ես» վիպակի նոր հրատարակութիւնը: Որդիին՝ Արամ Սարոյեանին նուիրուած գիրքի յառաջաբանին մէջ Սարոյեան գրած է. «Ես վճռեցի գրել այս գիրքը, որովհետեւ 1953-ին, երբ տարւոյ տարեկան էի, դու խնդրեցիր ինձ, եւ որովհետեւ 1918-ին, երբ ես ինքս էի տարւոյ տարեկան, իմ գրողական հմտութիւնը հաւասարագօր չէր այն ամենին, ինչ որ կ'ուզեցայի ասել: Հիմա՝ վերջապէս, գրեցի գիրքս, կամ աւելի ճիշդ՝ հէնց դու ալ գրեցիր»:

«Սարոյեանական մատենաշար»ի ստեղծման, «Հայրիկ, դու խենթ ես» վիպակի առանձնատպագրութեան մասին պատմած է թարգմանիչ Ձաւէն Պոյաճեան: Նշենք, որ գրոյցը լոյս տեսած է հայրենի «Մետիամաքս» կայքին մէջ:

- Պրն. Պոյաճեան ինչո՞վ պայմանաւորուած էր Սարոյեանի «Հայրիկ, դու խենթ ես» վիպակի վերահրատարակուելը առանձին գիրքով, եւ ինչո՞ւ այս վիպակը:

- Սարոյեանի ծննդեան 110-ամեակը պատեհ առիթ էր անոր գործերու իմ թարգմանութիւնները վերանայելու եւ վերահրատարակելու համար, որու մասին շատոնց կը մտորէի: «Անտարես» հրատարակչութեան հետ պայմանաւորուածութիւն ունիմ «Հայրիկ, դու խենթ ես» վիպակը, «Ուեսլի ձեքսոնի Արկածները» ու «Մայրիկ, ես սիրում եմ քեզ» վէպերը եւ Սարոյեանի ընտիր պատմուածքներու ժողովածոյ մը վերահրատարակելու շուրջ (վերջինս կազմուած պիտի ըլլայ ժամանակին գիրքերու մէջ տպագրուած եւ միայն մամուլի մէջ հրատարակուած գործերէն): Բայց այս ձեռնարկը քննարկուեցանքէն ետք ի վերջոյ ընդլայնուեցաւ՝ յանդերձ սարոյեանական յատուկ մատենաշար մը հրատարակելու գաղափարին, ճիշդը ըսելու համար, շատոնց հասունցած անհրաժեշտութիւն մը, որ ի մի կը բերէ մեծ գրողին ժառանգութեան լաւագոյն էջերը: Աւելորդ է նշել, որ նման մատենաշարը ինչ վիթխարի կարեւորութիւն կ'ունենայ մեզի համար Սարոյեանի արժանաւոր, ուղղակի անգնահատելի ստեղծագործութիւնը իսկապէս իւրացնելու առումով: Մատենաշարը կ'ընդգրկէ եւ ժամանակի քննութիւնը բռնած գործերու վերահրատարակումներ, եւ այդ քննութիւնը այնքան ալ բարեյաջող չյանձնած գործերու վերաթարգմանութիւններ, եւ, ինչ խօսք, նոր թարգմանութիւններ, մանաւանդ որ Սարոյեանի ժառանգութեան զգալի մաս մը դեռեւս կը մնայ չհայացուած:

է, որու իրագործումը տարիներու ջանքեր կը պահանջէ: Աւելցնեմ նաեւ, որ սա կ'ըլլայ սարոյեանական երկերու առաջին հրատարակումը օրինական հիմունքներով, քանի որ մինչեւ օրս անոնք Հայաստանի մէջ տպագրուած են հեղինակային իրաւունքի ոտնահարմամբ, փաստօրէն գրահեղինական ճանապարհով: «Անտարես»ը մտադիր է բացի բուն սարոյեանական մատենաշարէն, լոյս ընծայել առանձին գործեր եւ այդ մէկը պիտի կատարուի գուտ առեւտրական մօտեցումներով: Այսպէս, «Հայրիկ, դու խենթ ես» վիպակի ներկայ հրատարակութիւնը «Օտար Գիր» մատենաշարով է, բայց յառաջիկային վիպակը լոյս կը տեսնէ նաեւ William Saroyan նորաստեղծ մատենաշարով, իսկ անոր կը յաջորդէ «Մայրիկ, ես սիրում եմ քեզ» վէպը:

Իսկ ինչո՞ւ ընտրուած է «Հայրիկ»... այս գործը, կարելի է ըսել, խորհրդանշական արժէք ունի՝ ամփոփելով սարոյեանական արձակի ամենաէական յատկանիշերն ու անշփոթելի իւրօրինակութիւնը:

- Ձեր տուած հարցազրոյցներն մէկուն մէջ նշած էք, որ «Հայրիկ, դու խենթ ես» գիրքը շատ կարեւոր գործ է եւ պէտք է հայ ընթերցողի սեղանի գիրքը դառնայ: Ինչո՞վ կը բացատրէք այդ եւ վստա՞հ էք արդեօք, որ գիրքը ըստ արժանւոյն կը գնահատուի ու պահանջարկ կ'ունենայ:

- Բովանդակային խորքով եւ ոճական կատարելութեամբ «Հայրիկ» պարզապէս մոգական բնաբան է՝ իմաստուն ու գուլալ: Սա իրօք սեղանի գիրք է, որովհետեւ կը ձգտի մեկնիլ կեանքի, աշխարհի, մարդու բնոյթի հուսկեանական գաղտնիքները առակի, առասպելի,

Խօսքը մեծ նախագիծի մասին

ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՍԱՐՈՅԵԱՆԸ

Շարունակուած էջ 15-էն

նախատիպային պարզ, բայց եւ մշակութամանորէն շատ յագեցած ու բազմաշերտ հասկացութիւններու լեզուով: Յաւոք, գիրքը ինչպէս եղած է, այնպէս ալ կը մնայ թերագնահատուած, ինչպէս Սարոյեանի ստեղծագործութիւնը ընդհանրապէս: Անհնար է չհամաձայնիլ անգլիացի հռչակաւոր դերասան եւ գրող Սթիվըն Ֆրայի հետ, որ Սարոյեանը կը համարէ ամենաթերագնահատուած գրողներէն մէկը:

Աւելցնենք, նաեւ չընթերցուած: Իրապէս, Սարոյեանը կարծես քաջ յայտնի է բոլորին, կը խօսին անոր մասին, դատողութիւններ կ'ընեն ու կարծիքներ կը յայտնեն, բայց ինչպէս բազմիցս համոզուած եմ, երբ կը փորձես պարզել, թէ խօսակիցդ որքանով ծանօթ է Սարոյեանի ստեղծագործութեան, շատ յաճախ երեւան կու գայ, որ ծանօթութիւնը մակերեսային ու թուուցիկ բնոյթ ունի եւ կը լինի ոչ այնքան բուն ընթերցանութեան, այսինքն՝ սեփական փորձառութեան, որքան արդէն վաղուց շրջանառութեան մէջ մտած սահմանափակ պատկերացումներու եւ մաշած կարծրատիպերու, այսինքն՝ միջնորդաւորուած ընկալման վրայ: Այլ կերպ ըսած՝ քաջածանօթ Սարոյեան իրականութեան մէջ անծանօթ է: Անոր համար ալ շատ կ'ուզէի, որ «Հայրիկ, դու խենթ ես» վիպակի, ապա եւ սարոյեանական այլ գործերու նոր հրատարակութիւնները լիշեալ յարակարծիքը կտրելու, գրողի ստեղծագործութիւնը վերարժեւորելու, իրօք ճանչնալու ազդակ դառնալին ընթերցանութեան կարծես նկատելի աշխուժացման այս նոր բնաբանին մէջ:

- Կ'ենթադրեմ, որ վերանաւած է թարգմանութիւնը ձեր կողմէն: Խմբագրման անհրաժեշտութեան կա՞ր, ի՞նչ աշխատանք պահանջեց վիպակի նոր հրատարակումը:

տարակուսիւնը:

- Ի հարկէ, նախորդ հրատարակութենէն ետք տարիներ անցած են: Չէի ըսեր, որ բնաբանը հական վերափոխման ենթարկուած է, բայց թարգմանչական, լեզուական, խմբագրական բարեփոխումներ ըրած եմ, ուղղած բոլոր մեծ ու փոքր վրիպակները: Օրինակ՝ հին հրատարակութեան մէջ «Փողը» գլուխը, կորսնցնելով իր վերնագիրը, ձուլուած էր նախորդ «Պտուղը» գլուխին. վերջապէս հնարաւոր եղաւ այդ ուղղել: Այսօրուան գրաւոր հայերէնի լոյսի տակ վերանայուած է նաեւ կէտադրութիւնը: Ուրախ եմ, որ գիրքի ներկայիս բնաբանը թէ՛ թարգմանչական, թէ՛ լեզուական առումով աւելի անխոցելի է:

- Հայր եւ որդի յարաբերութիւնները, տասնամեայ տղայի աշխարհընկալումը, գրողական հայեացքը ամենատարբեր հարցերու շուրջ (առհասարակ Սարոյեանը) ընկալելի՞ են 21-րդ դարու ընթերցողին:

- Անկասկած: Սարոյեան առանց փոքրիշատէ չափազանցութեան ժամանակի պատնէշները յաղթահարած գրողներէն է, որոնց ընդունուած է դասական կոչել, այլ բան է, թէ այդ աշխարհի մէջ ու մեր մէջ ինչ աստիճանի լրջութեամբ կը գիտակցուի: «Հայրիկ, դու խենթ ես» վիպակին մէջ ակնառու է ենք Սարոյեանի աշխարհագրացողութեանն ու գրողական ձեռագիրին խիստ բնորոշ օտարման, երբ քաջածանօթ առարկան կամ սովորական ուզած բանդ կը դիտարկուի կողքէն, օտարուած հայեացքով, կարծես նորովի, եւ ի յայտ կու գայ ամբողջ անյայտ աշխարհ մը, աննկատ մնացած էութիւնը եւ մանրաշխարհը կը վերածուի տիեզերք:

«Հայրիկ»ի պատանի հերոսը կը պատմէ «Աշխարհը» յատկանշական գլուխի մէջ. «... ես կոպիճները, ջրիմուռի կտորն ու խեցիները լուացի եւ ամէն մէկը շատ ուշադիր գնցեցի, շուռումուռ տուի բոլոր կողմերից նայելու համար ու ինչե՛ր, ինչե՛ր ասես, որ չտեսայ: Աչքովս էնպիսի մանրուքներ ընկան, որոնք երբեք չէի տեսնուի: Մի կոպիճ կար՝ կէս ընկոյզի չափ, սեւ էր ու տեղ-տեղ կարմիր պուտերով. սպիտակ, մաքուր գիծը կարծես պատկի կոպիճը մի ամբողջ աշխարհի լինէր, սպիտակ գիծն էլ ցամաքն էր անցատուն ջրից: Կոպիճին նայելիս շատ ու շատ մտքեր գլխովս անցան, ու ես ուրախացայ, որ ընդունակ եմ ինձ հանդիպածը եսպէս պարզ տեսնելու, փոքրիկ առարկան եսպէս մեծ տեսնելու, էնքան մեծ, որքան ուզածդ բանը, ինչ էլ դա լինի եւ ուր էլ լինի»: Մերօրեայ մարդը յաճախ արդէն գուրկ է այդ տղու նշած ընդունակութենէն, մինչդեռ Սարոյեան կը գովերգէ պարզութիւնը, ողջ ըլլալու վայելքը, պարզ ու բնական բաներով հրճուելու կարողութիւնը, բնաշխարհի ներդաշնակ մասնիկը ըլլալու կորուսեալ զգացումը: Այս ամէնի անհրաժեշտութիւնը մեր օրերուն աւելի քան զգալի է: Մենք յաճախ կ'ապրինք առանց բուն իմաստով ապրելու. բուն կեանքը տեղ չունի մեր կեանքին մէջ: Կարճ ըսելու համար, աւելի արդիական, աւելի պահանջուած գրող 21-րդ դարուն դժուար է պատկերացնել:

- Տասնամեայ տղան ե՛ւ Արամն է, ե՛ւ ինքը՝ Սարոյեանը: - Այո, տղու նախատիպը կամ աւելի ճիշդը՝ կերպարի ելակէտը գրողի որդին է, բայց այս կերպարը դրոշմուած է նաեւ Սարոյեան գրողի կենսագրի լիստիկոսի մասնիկով: Գրական կերպարը, ինչպէս եւ արուեստի գործը, երբեք ալ միանշանակ բաղադրութիւն չունի, միշտ խտացուած է: - Ի՞նչպէս հասկնալ ի՞նչ է իրողի ներդաշնակ յարաբերութիւնները, որ նկարագրուած են գիրքին մէջ եւ արդէն յետագային՝ Ուիլիամ եւ Արամ Սարոյեաններու

բարդ, ոչ-միանշանակ յարաբերութիւնները: «Հայրիկ, դու խենթ ես» գիրքին մէջ կարելի՞ է գտնել այս հարցերուն պատասխանը:


- Սարոյեան իր անձը անուցած գրող է, անոր ստեղծագործութեան կարեւորագոյն ակունքներէն մէկը, իրօք, իր անձնական կեանքն է: Իսկ այդ կեանքի մեծ ողբերգութիւններէն մէկը գրողի ցաւագին ամուսնալուծութիւնն էր, լարուած յարաբերութիւնները կնոջ, որդիին եւ դստեր հետ: Փաստ է, որ փլուզուած ընտանիքը Սարոյեանի շարք մը գործերուն բնորոշ իրադրութիւնն է: Բայց գրականութեան մէջ գրողի պատկերած ընտանիքը շատ աւելի մօտ է ներդաշնակ, երջանիկ կամ գոնէ հաշտ ընտանիքի ձեւին, նման ընտանիք ունենալու անոր ձախողած ու անհաս երազին, քան այդ կարելի է ըսել իրական կեանքի մասին: Բացասական նշանի այս վերափոխումը դրականի հնարաւոր դարձած է գեղարուեստի, անուրջի, երազանքի կամ խոհալի յաւելմամբ դառն իրականութեան հենքին թէ ատաղձին, ուստի արդարացի չ'ըլլար հեղինակի եւ անոր մերձաւորներու վաւերական յարաբերութիւններու ուղղակի, անմիջական արտացոլանքը պրպտել գրական գործի մը մէջ:

- Ի՞նչ է այս վիպակին գլխաւոր առանձնայատկութիւնը՝ խօսիլ եւ ուրախ, եւ տխուր բաներու մասին, բայց այնպէս, որ «մարդիկ ծիծաղի՞ն» («Արի ես ու դու էնպիսի բաներ գրենք, որ մարդիկ ծիծաղեն, թէկուզ երկուսս էլ փող չվաստակենք, որովհետեւ ի՞նչ ուրախութիւն կը մնայ կեանքում, եթէ մարդիկ չծիծաղեն»):

- Այո՛, Սարոյեան, հակառակ կամ ի հեճուկա ամէն ինչի, կը գերադասէ, որ «մարդիկ ծիծաղեն», եւ եթէ կ'ուզէք, նաեւ ասոր մէջ է անոր գրականութեան ուժը կամ կենսունակութիւնը:

Հարցազրոյցը՝ Արմինէ Սարգսեանի (Մեխիմաքս)

Արեւմտահայերէնի վերածեց եւ իրատարակութեան պատրաստեց՝ Ս. Ա.



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepyan@gmail.com

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

Երուանդ Պապայեան Մանկավարժական Հիմնարկ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒ ԴԱՄԱՒԱՆԴԱՄԱՆ ԿՈՒՐՑՈՒՄՍ

ԽՈՐՀՂՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԵԱՐՔ

Ա

Դասաւանդութեան Յաջող Փորձառութիւններու
Ներկայացում եւ Փոխանակում

ԵԻ

Մանօթացում եւ Արիեստագիտական Կապերու Հաստատում
Ուսուցիչներու եւ Մասնագիտական Կազմակերպութիւններու
Միջեւ

Տեղի կուսնայ

Շաբաթ, 22 Սեպտեմբեր, 2018
Ժամը 9:00-3:00

ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնին մէջ

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել՝
Իոկտ. Սիլվա Գարայեանին
karayan@callutheran.edu

3 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ, ՈՐՈՆՔ ՁԵՐ ԱՌԱՒՕՏԸ ԲԱՐԻ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ



1. «Աստուած կու տայ անոր, որ շուտ կ'արթննայ»։ Սկիզբի համար պէտք է սորվիլ կանուխ արթննալ: Կը թուի, թէ դժուար է, բայց կանուխ արթննալը կ'երաշխաւորէ առաւօտեան հրաշալի առողջութիւն, ի հարկէ ժամանակին քնանալու պայմանով: Արթննալու իտէալական ժամանակ կը համարուի առաւօտեան 6-ը եւ աւելի շուտ: Իգուր չէ, որ մեր նախնիները կ'արթննային մայրամուտի հետ եւ՝ առանց որեւէ զարթուցիչի: Աւելի ուշ արթննալը լղի է հոգեյուզական վիճակի խանգարումով, որոշ հիւանդութիւններու սրումով, դիմադրողականութեան նուազումով, գլխացաւերով, մեծ ախորժակով եւ նոյնիսկ ճնշախտով:

Փորձեցէ՛ք գոնէ մէկ շաբաթ քնանալ 22-23:00-էն ոչ ուշ եւ արթննալ 6:00-ին: Հետեւեցէ՛ք ձեր ինքնազգացողութեան եւ տրամադրութեան: Վստահ եղէ՛ք, որ դուք գրեթէ անմիջապէս դրական պիտի զգաք: Եւ այն պատրուակը, թէ դուք «բու» էք, արդարացում չունի: Մենք բոլորս ի ընէ «արտոյտներ» ենք, ատիկա մեր մէջ դրուած է բնութենէն, ուր մայրամուտին հետ բոլոր կենդանի արարածները կը քնանան, իսկ կ'արթննան արեւածագին հետ: Մեզմէ շատերուն «բու» դարձուցած է քաղաքակրթութիւնը, կեանքի խելայել արագութիւնը եւ յառաջացած ճարտարագիտութիւններու դարը, բայց զայն կարելի է շտկել դիւրութեամբ:



2. «Պատրաստուի՛ր մարմնամարզութեան»։ Սովորութիւն

Ի՞ՆՉ ՊԵՏԷ Է ՈՒՏԵԼ ԵՐՁԱՆԻԿ ԶԳԱՆՈՒ ՂԱՍԱՐ

Ուտելիքը մեզ կ'երջանկացնէ եւ ատիկա ճշմարտութիւն է: Սերոթոնինի մակարդակի բարձրացումը մեզ բաւարարութեան եւ ընդհանուր հանգստութեան զգացում կը պարգեւէ:

Զգացմունքային ծանրաբեռնութեան պահերուն այդ հորմոնին մակարդակը, որ յաճախ կ'անուանեն երջանկութեան հորմոն, կ'իջնէ, որուն հետեւանքով մենք երբեմն այդքան շատ կ'ուզենք ուտել շոքոլաչ կամ որեւէ այլ քաղցր բան: Ասիկա տեղի կ'ունենայ այն պատճառով, որ մեր ջղաքին համակարգը շաքարի եւ դրիբե-դոֆանի կարիք ունի՝ սերոթոնին ապահովելու համար: Արեան մէջ սերոթոնինի ցած մակարդակը կրնայ դառնալ անհանգստութեան, դիւրագրգռութեան եւ թուլութեան պատճառ, որ կ'արտայայտուի վատ

դարձնելով կանուխ արթննալը, մենք քանի մը վայրկեան ազատ ժամանակ պիտի ունենանք, որոնք կարելի է անցնել՝ կատարելով առաւօտեան վարժութիւններու համալիր: Բայց մարմնամարզութիւնը մի խառնէք սփորթով լի-արժէքորէն զբաղելուն հետ: Մարմնամարզութիւնը ուղղուած է ներքին օրկաններու աշխատանքի աշխուժացման, արեան շրջանառութեան բարելաւման, կապերու եւ յօդերու մարզումին, որ պիտի օգնէ օրուան ընթացքին խուսափելու սովորական կենցաղային վնասուածքներէն:

Այդ պատճառով ձեզի համար առանձնացուցէ՛ք 10-15 վայրկեան, հանգստացուցէ՛ք մկաններու հիմնական խումբերը, կատարեցէ՛ք քանի մը պարզ վարժութիւն: Իտէալական առաւօտեան մարմնամարզութիւնը, զայն բնութեան գիրկին մէջ կատարելն է՝ թոքերը թթուածինով հարստացնելով: Բայց սովորական բնակարանի պայմաններուն մէջ հնարաւոր է պարզապէս օդափոխել սենեակը: Կանոնաւոր կերպով մարմնամարզութիւն կատարեցէ՛ք ամէն օր, ներառեալ հանգստեան օրերուն եւ մի մոռնաք անկէ առաջ կիրտ-րոնի շերտիկով 1-2 բաժակ տաք ջուր խմել:



3. Տաք եւ պաղ ցնցուղներ. Այո, առաւօտեան ծէսերը պէտք է աւարտել տաք եւ պաղ ցնցուղներով: Տաք եւ պաղ ցնցուղներուն հերթագայութիւնը կ'աշխուժացնէ արեան շրջանառութիւնը, կ'աշխուժացնէ նիւթափոխանակութիւնը, կը բարելաւէ դիմադրողականութիւնը եւ կը մարզէ մարմինը ընդհանուր առմամբ: Մէկ խօսքով, անիկա առողջութեամբ կը լիցքաւորէ ամբողջ օրուան համար: Առաւօտները այս ոչ բարդ սովորութիւնները իրականացնելով՝ պիտի նկատէք, որ «առաւօտը բարի չէ» ասոյթը հաստատ ձեր մասին չէ:



տրամադրութեամբ: Մենք կրնանք օգնել մեր մարմնին սերոթինի արտադրութեան մէջ, եթէ օգտագործենք B եւ C վիթամիններով, մակնիւումով եւ դրիբեդոֆանով հարուստ սնունդ: Ուտելիքներ, որոնք կը բարձրացնեն տրամադրութիւնը՝ պանիրը, կաթնաշուր, ձուկը, միսը դրիբեդոֆանի բնական աղբիւրներն են: Ընկուզեղէնը եւ չիրերը կ'օգնեն հարստացնելու մարմինը մակնիւումով

ՈՒՅՈՎ ԹԵՅԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ուրցը իւրայատուկ բոյս է, որ մարդկութեան յայտնի է հին ժամանակներէն: Անիկա ունի հաճելի համ եւ բուժիչ յատկանիշներ:

Ուրցը ունի մանրէասպան, ցաւազրկող, պրոնիւնները լայնցնող յատկանիշներ: Անիկա արագ կը վերականգնէ վնասուած քները, մարմինն զուրս կը հանէ որդերը:

Ուրցը նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակութիւնը, որ չափազանց կարեւոր է անոնց համար, որոնք կը հետեւին իրենց կշիռքին:

Ուրցի չորցած ծաղիկներով թէյը խորհուրդ կը տրուի անոնց, որոնք կը տառապին անքնութենէ:

Ուրցով թէյը նաեւ կը հանգստացնէ ռումբիզմի եւ արթրիտի ժամանակ յառաջացած ցաւերը: Այս բոյսը կ'օգտաործուի թոքային շարք մը հիւանդութիւններու պարագային, օրինակ՝ ազմա, պրոնիւիտ եւ այլն:



Ուրցով ըմպելիներ քառորդ գաւաթ ջուրին աւելցուցէ՛ք 1 թ/դ չորցուած ուրց: Եռացուցէ՛ք եւ ձգեցէ՛ք հանգչի 10 վայրկեան: Լեցուցէ՛ք գաւաթի մէջ, աւելցուցէ՛ք եռացացած ջուր եւ 5-7 վայրկեան եւս ձգեցէ՛ք մնայ, ապա՝ քամեցէ՛ք ու վայելեցէ՛ք համեղ թէյը:

Ուրցը, սակայն, խորհուրդ չի տրուիր կազթրիթ, ստամոքսի խոց, վահանագեղձի խնդիր, շաքարախտ ունեցող մարդոց: Յղիներուն եւ փոքրիկներուն խորհուրդ կը տրուի հարցնել բժիշկի կարծիքը:

ԶՈՅԳԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԸ ԿԻՍԵՆ ՏՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԱՒԵԼԻ ԵՐՁԱՆԻԿ ԵՆ

Կ'ըսեն, որ իրական տղամարդիկ պէտք է երթան աշխատանքի եւ ընտանիք պահեն: Իսկ անոնց գեղեցիկ կէսերը այդ ժամանակ պէտք է մնան տունը, խնամեն փոքրիկները եւ ընտանեկան յարմարաւետութիւն ստեղծեն: Սակայն, եթէ ձեր ժամացոյցը քանի մը տասնեակ տարիներով ետ չէ մնացած, ուրեմն դուք պիտի ըսէք, որ դերերու այդպիսի տեղաբաշխումը շատնոց արդէն արդիական չէ:

Այժմ աղջիկները տղամարդոցմէ ոչ պակաս կը հետեւին իրենց ասպարէզին եւ ամէն օր աշխատանքի կ'երթան: Վերադառնալով, սակայն, անոնք ամբողջութեամբ կը լծուին տնային գործերուն՝ մաքրութիւն ընել, ընթրիք պատրաստել, ամանները լուալ: Հաւանաբար անոնց տղամարդիկը ուղղակի տեղեակ չեն այն հետազօտութիւններուն մասին, որոնք ապացուցած են, որ տնային պարտականութիւններուն բաժանումը սիրահարներուն կեանքը աւելի երջանիկ կը դարձնէ: Առաջին այսպիսի հետազօտութիւնը կատարած մասնագէտը ուսումնասիրած է բազմաթիւ գոյգեր եւ եկած այն եզրակացութեան, որ կենցաղային պարտականութիւններուն բաժանումը յարաբերութիւններու ներդաշնակու-

թեան գրաւականն է: Քիչերն են, որ կը սիրեն տնային գործերով զբաղիլ: Սակայն, եթէ տղամարդը կ'օգնէ իր տիկնոջ, վերջինս կը զգայ, որ զինք կը գնահատեն եւ աւելի քիչ կը վրդովի: Բացի այդ, պարտականութիւններու հաւասար բաժանման պարագային՝ սիրահարները աւելի ուշ կը յոգնին, բան մը, որ կը նշանակէ, որ անոնց ուժերը պիտի բաւեն մինչեւ ուշ գիշեր: Այս հասարակ գաղտնիքը կրնայ փրկել զանոնք, որոնք նոր կը սկսին ընտանեկան կեանքը: Երկու տարիէն ոչ աւելի ամուսնացած 220 գոյգերու հարցումը ցոյց տուած է, որ պարտականութիւններու հաւասար բաժանումը կ'օգնէ անոնց վերապրելու ընտանեկան առաջին խնդիրները եւ հասնելու փոխըմբռնման: Այսպիսի փոքր բացայայտումները ցոյց կու տան, թէ որքան կարեւոր է ընտանեկան կեանքին մէջ կիսել ոչ միայն երջանիկ պահերը, այլ նաեւ ծանծարալի ամէնօրեայ գործերը: Եւ այսպէս, եթէ կ'երագէ՛ք ամուր եւ առողջ յարաբերութիւններ ունենալ, մի մոռնաք կիսել կենցաղային գործերը: Տղամարդիկ ուղղակի պէտք է աւելի յաճախ առաջարկեն իրենց օգնութիւնը եւ երջանկութիւնը երկար սպասեցնել չի տար:

Եւ օգտակար ամինաթթուներով: Պանանը, անանասը եւ սալորը նոյնպէս հարուստ են դրիբեդոֆանով:

Վիթամին C-ով հարուստ միրգերը, օրինակ, նարինջը եւ քիւրին անհրաժեշտ են մարմնի առողջութեան համար: Եւ, իհարկէ, շոքոլան, որ ուժ կը հաղորդէ մեզի, մեր մարմինը կը հարստացնէ մակ-

նիւումով եւ կը նպաստէ սերոթինի արտադրութեան: Սակայն, պէտք չէ մոռնալ չափի մասին: Չ'արժէր շարաշահել այն ուտելիքները, որոնք կը բարձրացնեն սերոթոնինի արտադրութիւնը, որպէսզի մարմինը չհիւժի: Բացի այդ, քաղցրաւենիքի չափէն աւելի օգտագործումը նոյնպէս օգուտ չի բերեր: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՎ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ՂԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՂԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՇՈՒԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՍԱՐՉԱԿԱՆ

ՈՒԵՖԱ-ի Ազգերի լիգա. Հայաստանը պարտվեց Մակեդոնիային

ՈւեֆԱ-ի Ազգերի լիգայի մրցաշարի երկրորդ տուրում Հայաստանի հաւաքականը Սկոպյեում 0:2 հաշուով պարտութիւն կրեց Մակեդոնիայի հաւաքականից:



Խաղի հաշիւը 13-րդ րոպէին 11-մետրանոց հարուածով բացեց էզզիեան Ալիոսկին, 59-րդ րոպէին Գորան Պանդելը կրկնապատկեց այն:

Այս յաղթանակից յետոյ Մակեդոնիայի հաւաքականը 6 միաւորով գլխաւորում է D լիգայի 4-րդ խմբի մրցաշարային աղիւսակը, Հայաստանը 3 միաւորով առաջժամ երկրորդ հորիզոնականում է:

Մրցաշարի յաջորդ երկու հանդիպումները Հայաստանի հաւաքականը կ'անցկացնի սեփական յարկի տակ՝ Հոկտեմբերի 13-ին ընդունելով Զիրբալթարի, Հոկտեմբերի 16-ին՝ Մակեդոնիայի թիմերին:

Առաջին տուրում Հայաստանը յաղթել էր Լիխտենշտեյնին 2:1 հաշուով:

Անգլիայի Հաւաքականը Կրկնել է 30 Տարուայ Անյաջողութիւն

Անգլիայի հաւաքականն, ՈւեֆԱ-ի Ազգերի լիգայի առաջին տուրի խաղում պարտուելով իսպանացիներին, կրել է երրորդ անընդմէջ պարտութիւնը:

Նախորդ անգամ Անգլիայի հաւաքականը 3 անընդմէջ պարտութիւն կրել էր 1988թ. Եւրոպայի առաջնութիւնում:

Նախորդ 2 պարտութիւններն անգլիացիները կրել էին Ռուսաստանում այս ամբողջ կայացած աշխարհի առաջնութիւնում: ԱԱ-2018-ի կիսաեզրափակիչում Գարեթ Սուոթթի գլխաւորած թիմը պարտուել էր Խորուաթիային (1:2), իսկ երրորդ տեղի համար խաղում՝ Բելգիային (0:2):

Յիշեցնենք, որ Սպանիայի դէմ խաղում Անգլիայի հաւաքականը տնային պարտութիւն էր կրել 1:2 հաշուով: Անգլիացիները Լոնտոնի «Ուեմբլի» ստադիոնում նախորդ անգամ պաշտօնական խաղում պարտուել էին 2007 թուականին: Եւրո-2008-ի ընտրական փուլում Անգլիայի թիմը 2:3 հաշուով պարտուել էր Խորուաթիայի հաւաքականին: «Ուեմբլիում» Անգլիայի հաւաքականի անպարտելի շարքը չհարուստակուեց 25-րդ խաղում:

Մոդրիչ. Ռոնալդուն Շնորհաւորել է Ինձ ՈՒԵՖԱ-ի Լաւագոյն Ֆուտպոլիստի Մրցանակին Արժանանալու Կապակցութեամբ

«Ռեալի» կիսապաշտպան Լուկա Մոդրիչը խօսել է «Ոսկէ գնդակ» մրցանակը ստանալու հաւանականութեան մասին: Մրցանակին յաւակնում է նաեւ Մոդրիչի նախկին թիմակիցը՝ «Յուվենտուսի» յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն:



«Ուրախ եմ, որ յաւակնորդների թւում եմ: Տեսնենք, թէ ով կ'ստանայ մրցանակը: Անհատական մրցանակները կարեւոր են, սակայն ինձ համար աւելի մեծ նշանակութիւն ունեն թիմային տիտղոսները:

Ես լաւ յարաբերութիւններ ունեմ Ռոնալդուի հետ: ՈւեֆԱ-ի վարկածով մրցաշարի լաւագոյն ֆուտպոլիստի մրցանակը ստանալուց յետոյ խօսել եմ Կրիշտիանուի հետ: Նա ինձ շնորհաւորական հաղորդագրութիւն է գրել եւ յոյս յայտնել, որ շուտով կը հանդիպենք: Կրկնում եմ՝ մենք լաւ յարաբերութիւններ ունենք եւ դրանք կը պահպանուեն՝ անկախ նրանից, թէ մարդիկ ինչեր են խօսում», - Մոդրիչի խօսքը մէջբերել է L'Equipe-ն:

Էրիկ Կանտոնա. Մոուրիցիոյի Արժանիքները «Մանչեսթեր Եունայթեդի» Համար Չեն

«Մանչեսթեր Եունայթեդի» նախկին կիսապաշտպան Էրիկ Կանտոնան քննադատել է թիմի գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրինիոյին:

«Ամէն ինչ այնքան էլ յաջող չէ: Սակայն հիմա մրցաշարի սկիզբն է, դեռ վաղ է դատել: «Մանչեսթեր Եունայթեդը» մեծ ակումբ է եւ այդպիսին կը լինի միշտ: Նա տիտղոսներ կը նուաճի, եւ ես դրանում վստահ եմ:

Բայց արհաւիրական այն չէ: Մարզիչը թիմին ստիպում սխալ ոճով խաղալ: Չկայ ստեղծագործական միտք եւ գրաւելութիւն:

Մուրինիոն ինձ դուր է գալիս: Նա շատ արժանիքներ ունի, բայց ոչ «Եունայթեդի» համար: Նրանք պէտք է Գուարդիոլային հրաւիրեն:

Հայ Ընթիշները Նուաճել են 2 Ոսկէ Մետալ

Հայաստանի ներկայացուցիչներ Նորայր Յակոբեանը (55 կգ) եւ Սլաւիկ Գալստեանը (63 կգ) ոսկէ մետալակիր են դարձել Լեհաստանի մայրաքաղաք Վարշաւայում ընթացող Վլադիսլաւ Պետրեանսկու անունի յունահունական ոճի ըմբշամարտի յունամրցաշարում:



55 կգ քաշային կարգի եզրափակիչում Նորայր Յակոբեանը 10:2 հաշուով վստահ յաղթանակ է տարել բուլղարացի Նեդիալկո Պետրովի նկատմամբ: Նոյն քաշային կարգում բրոնզէ մետալ է նուաճել Պրազիլիան ներկայացնող Սարգիս Խաչատրեանը:

63 կգ քաշայինների եզրափակիչում Սլաւիկ Գալստեանը տուշով յաղթել է բուլղարացի Նիկոլայ Վիչեւին:

Ռիո-2016-ի Օլիմպիական խաղերի ոսկէ մետալակիր, աշխարհի եռակի ու Եւրոպայի քառակի ախոյեան Արթուր Ալեքսանեանը պրոնզէ մետալը պէտք է վիճարկեր իտալիան ներկայացնող Նիկոլոս Կախիլաշ-Վիլու հետ, սակայն վնասուածքի պատճառով գիւմրեցի ըմբշը չի ներկայացել գոտեմարտին:

97 կգ քաշային կարգում Ալեքսանեանը 2 յաղթանակներից յետոյ կիսաեզրափակիչում տուշով պարտուել էր ԱՄՆ-ի ներկայացուցիչ Թրեյսի Հանկակին, որը եզրափակիչում 7:0 հաշուով յաղթել է բուլղարացի Նիկոլայ Նիկոլաեւ Բայրյակովին:

US Open. Սերենա Ուիլիամսը Սենսացիոն Պարտութիւն Կրեց Եզրափակիչում

Աշխարհի 19-րդ ռակետ Նաոմի Օսական սենսացիոն յաղթանակ տարաւ Նիւ Եորքում անարտուած թենիսիսի ԱՄՆ-ի բաց առաջնութեան կանանց մենխաղում:



US Open-ի եզրափակիչում 20-ամեայ ճապոնացի թենիսիստուհին 2 սեթում 6:2, 6:4 հաշուով առաւելութեան հասաւ աշխարհի նախկին առաջին ռակետ, այժմ դասակարգման 26-րդ համար Սերենա Ուիլիամսի նկատմամբ: Մրցախաղը տեւեց 1 ժամ 19 րոպէ:

Երկրորդ սեթի ժամանակ ամերիկացի թենիսիստուհին տուգանային գէյմ ստացաւ մրցավարին անպատուելու համար: Մրցավարը Սերենային զգուշացում է տուել այն բանից յետոյ, երբ ամերիկուհին տրիբունայից յուշում է ստացել իր մարզիչից:

Նաոմի Օսական առաջին տիտղոսը նուաճեց «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում եւ սահմանեց պատմական ռեկորդ: Նա պատմութեան առաջին ճապոնացի թենիսիստն է, որը յաղթում է «Մեծ սաղաւարտի» մրցաշարում: Օսական այս տարուայ Մարտին Սերենա Ուիլիամսին յաղթել էր նաեւ Մայամիի մրցաշարում:

Նովակ Զոկովիչը՝ US Open-ի Եռակի Յաղթող

Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնութեան յաղթողի կոչումը նուաճեց աշխարհի նախկին առաջին ռակետ Նովակ Զոկովիչը:



Եզրափակիչում սերբ թենիսիստը 3 սեթում վստահ յաղթանակ տարաւ արժենտինացի խուան Մարտին դել Պոտրոյի նկատմամբ՝ 6:3, 7:6, 6:3: Թենիսիստները կորտում անցկացրին 3 ժամ 15 րոպէ:

Զոկովիչը դարձաւ «Մեծ սաղաւարտի» մրցաշարերի 14-ի յաղթող: Այս տարի նա յաղթել էր նաեւ Ուիմբլդոնում:

Յիշեցնենք, որ US Open-ը «Մեծ սաղաւարտի» տարւոյ վերջին մրցաշարն է: Այս տարի յաղթողի տիտղոսը չկարողացաւ պաշտպանել աշխարհի առաջին ռակետ Ռաֆայել Նադալը, որը կիսաեզրափակիչում պարտվել էր Դեյ Պոտրոյին:

Նովակ Զոկովիչը US Open-ում յաղթել էր նաեւ 2011-ին ու 2015-

Պեպը պէտք է աշխատի «ՄեՈւ»-ում, սակայն այժմ նա այլ ակումբում է արարում: Ակումբում, որի անունը չեմ ցանկանում տալ: Կատակում եմ, «Մանչեսթեր Սիթին» ցուցադրում է հիանալի ֆուտպոլ: Կարծում եմ, որ Գուարդիոլան պէտք է յայտնուի «Եունայթեդում»:

Նա Եոհան Կրոյֆի հոգեւոր ժառանգորդն է: Պեպը «Բարսելոնայում» աղացել է նրա գլխաւորութեամբ եւ նրանից շատ բան սովորել», ասել է Կանտոնան:

Ո՞վ է Գաղտնալսել ԱԱԾ ու ՀԲԾ Պետերին

Շարունակուած էջ 2-էն

րող էին նման գաղտնալսում կազմակերպել: Տեսականորէն՝ այո, եթէ, ի հարկէ, ԱԱԾ-ն որակապէս չի փոխուել ու հեղեղուած է նրանց կողմերով, կամ ինչպէս քիչ առաջ նշեց Վանեցեանը՝ դաւաճաններով: Այդ դէպքում՝ ինչո՞վ է զբաղուած ԱԱԾ տնօրէնը: Առնուազն տարակուսելի է Վանեցեանի անվրդով կեցուածքը, երբ նա հանգիստ տօնով յայտարարում է, որ գաղտնալսողները կարող էին հասնել անգամ բանակի ղեկավարի, վարչապետի հեռախօսագրանգերին: Արդեօ՞ք սա հետեւանք չէ նրա, որ ԱԱԾ պետը՝ իր բուն գործառնութիւններով զբաղուելու փոխարէն, դարձել է հեռուստաաստղ, հիմա էլ յաւակնում է ՀԲԾ նախագահի պաշտօնին:

Խիստ տրամաբանական է մտածել, որ այս գաղտնալսման թիկունքում կանգնած են ուսուական յատուկ ծառայութիւնները, մանաւանդ, որ Մոսկովան է շարունակ պնդում, թէ Հայաստանում հետապնդուած են նախկինները: ԱԱԾ տնօրէնի ու ՀԲԾ պետի հեռախօսագրոյցի գաղտնալսման հրապարակայնացումը մասամբ լուծում է այս խնդիրը, որովհետեւ փաստուած է, օրինակ, որ դատական համակարգն այնքան էլ անկախ չէ ու կալանքի որոշումները դարձեալ ուղղորդուած են գործադիր իշխանութեան, նրա ուժային կառուցանքի ղեկավարների կողմից: Սրանից լաւ «նուէր» Քոչարեանին՝ դժուար է պատկերացնել, քանի որ նրա փաստաբանները մինչեւ Ստրասբուրգ հասցնելու են այն փաստը, որ կալանաւորման սանկցիայ տուած առաջին ատեանի դատարանի դատաւորը իր որոշումը համաձայնեցրել է ԱԱԾ պետի հետ կամ նոյնիսկ նրա կողմից ցուցում է ստացել:

Արդեօ՞ք հայկական քրէսօլի-գարիխան ղեռ այնքան «կենսու-

նակ» է, որ կարող է գաղտնալսել ԱԱԾ ու ՀԲԾ ղեկավարներին, գուցէ՛ վարչապետին: Եթէ այդպէս է, ապա Հայաստանում յեղափոխութիւնը յաղթել է յարաբերականօրէն կամ նոյնիսկ չի յաղթել, որովհետեւ նման սաբոտաժի ուսուաններ ունեցող համակարգը կարող է «պայթեցնել» ցանկացած ընտրութիւն: Ենթադրաբար՝ մեր քրէսօլիգարիխան գործել է արտաքին աջակցութեամբ, իսկ աւելի ստոյգ՝ Ռոբերտ Քոչարեանին ընկեր համարող յայտնի երկրի նախագահը որոշել է չբաւարարուել միայն շնորհաւորական հեռախօսագրանգով ու Քոչարեանին «նուիրել» է սկանդալային գաղտնալսումը կամ դրա հրապարակայնացումը: Սակայն ինչքան էլ արժանահատ լինի գաղտնալսման արտաքին վարկածը, միեւնոյն է՝ այն հնարաւոր է դարձել միայն ներքին դաւաճանի կամ դաւաճանների միջոցով, ու մեր առաջնահերթ խնդիրն է նրանց յայտնաբերելը, եթէ, ի հարկէ, պետական համակարգը դեռ ամբողջովին չի կորցրել աղեկատուութիւնը:

Արթուր Վանեցեանի ու Սասուն Խաչատրեանի ասուլիսը, թերեւս, գաղտնալսման հետ կապուած պարզաբանումներով համոզիչ չէր, աւելին՝ տպաւորութիւն ստացանք թոյլ պետական համակարգի մասին, որը շուտաւարձ էր գաղտնալսման փաստից: Առհասարակ՝ հասկանալի չէր Վանեցեանի ու Խաչատրեանի տոնայնութիւնը կամ այն հանգամանքը, որ նրանք իրենց հետ հատորներ էին բերել՝ նոր, ցնցող բացայտումներով, որոնք վերաբերում էին Մարտի 1-ի գործին: Ինչ կապ ունէին դրանք այսօրուայ ասուլիսի, գաղտնալսման փաստի, մեր պետական մարմինների դիլետանտիզմի հետ, որի պատճառով Հայաստանը կանգնած է անվտանգային լուրջ ռիսկերի առաջ: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Փաստինայի Հայութիւնը Նշեց

Շարունակուած էջ 8-էն

արդարացուցիչ ցուցաբերելով ձեր անսահման սէրը դէպի Աստուած, դէպի Մայր Հայրենիքիւ Սուրբ Էջմիածին, ուր բազմաթիւ անգամներ ուխտաւորներ տարած էք: Վարձքը կատար այս փառաւոր հանդիսութիւնը կազմակերպող

ծխական խորհուրդին: Մեր ամենաջերմ մաղթանքները Տէր Սարգիսին, երէցկին Թալինին եւ դուստրը Շնորհիկին (Կրէյս):

Սոյն ճաշկերոյթ-հանդիսութիւնը վերջ գտաւ Սրբազան Հօր աղօթքով, որմէ ետք ներկաները բաժնուեցան ողբերուած տօնական լաւագոյն տրամադրութիւններով:

Մերտինեան Վարժարանի Վերամուտը

Շարունակուած էջ 13-էն

նութիւնը, կրօնի բաժանմունքի պատասխանատու Լենա Էքմէքճեանի առաջնորդութեամբ:

Տնօրէնուհի Արալանեան ողջունեց բոլորը, ապա հրաւիրեց պատուելի Շահնազարեանը, որ իր կարգին, աղօթքով ու աշակերտներուն ուղղուած հոգեպարար պատգամով իր բարեմաղթութիւնները փոխանցեց Մերտինեան վարժարանի մեծ ընտանիքին: Ապա, Արալանեան բեմ հրաւիրեց հոգաբարձական կազմէն Ռիթա Մէնէշեանը, որ իր խօսքը փոխանցեց աշակերտներուն:

Տնօրէնուհին ապա հաճոյքով յայտարարեց վարժարանիս աշակերտներուն թուային աճին մասին եւ արագ ակնարկ մը կատարեց ամրան կայացած ճամբարի իրագործումներուն եւ յառաջիկայ տարուան ծրագրերուն վրայ, հաստատելով, թէ ընդհանրապէս ծնողներու փափաքին՝ արդէն իսկ գործի կը դրուի արեւմտահայերէնի գուգահեռ, արեւելահայերէնի դասաւանդման կրթական ծրագիրը՝ նախակրթարանի առաջին երեք դասարաններուն համար: Ան յորդորեց ծնողները գործօն մասնակցութիւն բերելու վարժարանի աւօրեայ աշխատանքներուն՝ յանձնարարելով, որ անոնք սերտ կապեր ունենան դպրոցին հետ՝ կամաւոր

ծառայութիւններ մատուցելով անոր:

Ապա, ան ներկայացուց 2018-2019 տարեշրջանի ուսուցչական կազմն ու պաշտօնէութիւնը՝ բոլորին մաղթելով առողջ, յաջող եւ իրագործումներով լի տարեշրջան մը. տնօրէնուհին իր երախտագիտական զգացումները յայտնեց անոնց, որոնք ողբերութեամբ աշխատեցան՝ սատարելով նոր տարեշրջանի հեզասահ մեկնարկին:

Բացման հանդիսութիւնը փակուեցաւ «Հայր Մեր»ով, որմէ ետք աշակերտները նոր խանդավառութեամբ մեկնեցան իրենց դասարանները, հանդիպելու համար իրենց ուսուցիչներուն, նոր ու նախկին դասընկերներուն, եւ սկսելու նոր տարեշրջանը՝ նոր յոյսերով ու նոր խանդով:

Նոյն օրը, ժամը 9:30ին տեղի ունեցաւ Մերտինեան վարժարանի նախամանկապարտէզի վերամուտի հանդիսութիւնը: Ընթացքին խօսք առաւ նախամանկապարտէզի պատասխանատու Մարիտան Գէորգեան, որ ողջունեց բոլոր ծնողները՝ վստահեցնելով, որ Մերտինեանի նախամանկապարտէզին մէջ իրենց զաւակները պիտի վայելեն սէր, գուրգուրանք եւ հոգածութիւն: Ապա բոլորը ուղղուեցան իրենց դասարանները:

Բարի վերադարձ ու բարի տարի:

AMAA Centennial Banquet
 Los Angeles – October 20, 6 pm , AMAA Centennial Banquet at Biltmore Hotel will honor Benefactors Stephen Philibosian and Conte Foundations, Sheen Family Trust, Gerald and Patricia Turpanjian, TF Educational Foundation. Kenneth Khachigian, Master of Ceremonies . For more information call Levon Filian 626.487.5878 or the AMAA Office 201.265.2607 or e-mail mpoulos@amaa.org


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State: ----- Zip Code: -----
 Country: -----
 Tel: ----- Email: -----

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար
 Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ





Vahe Atchabahian
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 massis2@earthlink.net



SPONSORS



ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

Փառատոն

SUNDAY SEPTEMBER 23, 2018

VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

Live Music & Dancing

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

Art Work Exhibition

ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ

ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ

Kids Games

ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

Armenian Food

ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

GENERAL SPONSOR

INNOVATIVE

Designs



Manufacturing, Inc.

By TED & NORA KOROGHLIAN

To reserve your vendor booth please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցեք

Նոր Սերունդ Մշակութային Միութեան

(818) 391-7938